Azg Ազգ

12 ՅՈՒՆԻՍ 2007 ԵՐԵՔՇԱԲԹԻ 109 (3761)

Հայաստանի Ազգային Գրադարան

Սերժ Սարգսյանի խոսացած անակնկալները նոր կառավարությունում

Ովքե՞ր են նոր նախարարներ դարձել

Նոր կառավարության կազմն արդեն հայտնի է: Սերժ Սարգսյանի խոսացած անակնկալները կարծես թե այնքան էլ շաս չեղան եւ սպասելիքներն այս առումով ավելին էին: Դա թերեւս պայմանավորված էր առաջիկա նախագահական ընտրությունների հանգամանքով: Նախագահ դառնալու հավակնություն ունեցող վարչապետը հավանաբար չի ցանկանում կտրուկ ցնցումներ առաջացնել եւ իշխանական վերնախավում իր դեմ տրամադրություններ ստեղծել:

Այսպիսով, նախորդ կառավարության անդամների մեծամասնությունը պահպանեցին իրենց պաշտոնները: Փոփոխվեցին միայն 5 նախարարներ, իսկ մեկն էլ այդ պաշտոնը սացավ այդ նպատակով կատարված կառավարության կառուցվածքային փոփոխության շնորհիվ:

Անակնկալներն իսկապես որ շաս չէին: Դրանց մեջ ամենադրականն այն էր, որ Կարեն Ճշմարիտյանի փոխարեն, որն, այդտեղ, որպես նախարար իրեն վատ չէր դրսեւորում, առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար նշանակվեց նույնպես բարձրակարգ մասնագետ, մինչ այդ Կենտրոնական բանկի նախագահի խորհրդական, երիտասարդ ֆինանսիստ Ներսես Երիցյանը: Բարեբախտաբար, չիրականացան շրջանառվող լուրերն այն մասին, որ այդ պաշտոնում պետք է նշանակվեր խորհրդարան չանցած Միավորված ազատական կուսակցության նախագահ Գուրգեն Արսենյանը, որի մասնագիտական որակները ակնհայտորեն բավարար չեն նման պաշտոն զբաղեցնելու համար:



Առողջապահության նախարար դարձավ **Հարություն Քուրկյանը**: Նա այս ոլորտի հայտնի անձնավորություններից է: Միաժամանակ գաղտնիք չէ, որ Հարություն Քուրկյանն առողջապահության ոլորտի ամենախոշոր օլիգարխն է, որին են պատկանում երկու խոշոր առողջապահական համալիրներ՝ «Էրեբունի» եւ «Նաիրի» (նախկին Լեչկամիսիա) բժշկական կենտրոնները:

Տես էջ 2

Կասպից-Սեւ ծով նավարկելի ջրանցք, անունն էլ «Եվրասիա»

Կասպից եւ Սեւ ծովերի միջեւ կարելի է նավարկելի ջրանցք կառուցել: Այսպիսի առաջարկ է արել Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը պետերբուրգյան 11-րդ տնտեսական համաժողովում՝ միանգամից առաջարկելով նաեւ ջրանցքի անվանումը՝ «Եվրասիա»: «Ռոսբալտ» գործակալության տեղեկացմամբ, մտահղացման համաձայն, ջրանցքը պետք է 1000 կմ ավելի կարճ լինի, քան Վոլգա-Դոնյանը եւ Կենտրոնական Ասիայի երկրներին հնարավորություն կընձեռի դեպի ծովեր ելք ունենալ Ռուսաստանի տարածքով: Ղազախստանի նախագահը գտնում է, որ Կենտրոնական Ասիայի էներգառեսուրսները համաշխարհային շուկաներ հասցնելու ուղիների ընտրությունը տնտեսական ուղենիշներ ունի եւ ոչ թե քաղաքական:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Քոչարյան-Ալիեւ երեքշաբաթյա հանդիպումը չբերեց որեւէ համաձայնության

Ղարաբաղյան հարցի կարգավորումը հերթական անգամ մնում է փակուղի՞

Քանի դեռ ժամանակային առումով մոտ չէր Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպման ամսաթիվը, որի շրջանակներում նախատեսվում էր Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների համար, այդ նույն հանդիպման առնչությամբ լավատեսությունն աջ ու ձախ «աչք էր ծակում»: Մինչդեռ վերջին օրերին այդօրինակ տրամադրվածության մասին չխոսեց անգամ լավատեսության անձնական հայտնիշներով հդարտացող, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան:

Լավատեսությունից ոչինչ չմնաց, չհնչեցին նաեւ Քոչարյան-Ալիեւ հանդիպումը «բեկումնային», «շրջադարձային» որակելու հայտարարություններ: Երեք ժամ տեւած հանդիպման մասին Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը նշել է, թե Սանկտ Պետերբուրգում բանակցությունները «լուրջ էին, սակայն համաձայնություն ձեռք չի բերվել»:

Տես էջ 3

Հայ գերին չի՞ ցանկանում վերադառնալ Հայաստան

Ադրբեջանին աշխ...

Ադրբեջանցիները ոչ մի կերպ որոշ ճշմարտություններ չեն կարողանում ընդունել: Մասնավորապես, ի թիվս այլ իրողությունների, Ադրբեջանը չի կարողանում հաշտվել նաեւ այն մտքի հետ, որ ադրբեջանցի զինծառայողները չեն ցանկանում երկիր վերադառնալ: Ավելին, անգամ համաձայնում են մնալ Հայաստանում, բայց վերադարձին Ադրբեջան չկանգնել ռազմական դատարանի առաջ ու դատապարտվել տասից ավելի տարվա ազատազրկման, այն էլ հայրենիքի դավաճանության հոդվածով:

«Ազերի.պրես» գործակալությունը տեղեկություն է տարածել, թե Ադրբեջանում գերի է ընկել Վալերի Սուրենի Սուլեյմանյանը, որ իբր չի ցանկանում վերադառնալ Հայաստան: Ավելին, գործակալությունը, թերեւ հստակ պատվեր կատարելու տարբերակով, անանուն աղբյուրների հղում կատարելով «իրազեկում» է, թե Սուլեյմանյանը պատմել է Ղարաբաղի ժողովրդի՝ «ռազմական չճանաչված ռեժիմի անօրինական գործունեությունից, եւ որ հայ բնակչությունը (կարծես ուրիշը կա Ղարաբաղում) զանգվածաբար լքում է տարածքը»:

Հայաստանի պաշտպանության նախարարի մամլո քարտուղար Սեյրան Շահսուվարյանը «Ազգին» ի պատասխան նշեց, որ նման տեղեկություն չունեն:

Ա. Հ.

Վրաստանն ու Ռուսաստանը բարելավում են հարաբերությունները

Վրաստանը եւ Ռուսաստանը համաձայնել են ասպիճանաբար վերացնել առեւտրի եւ քաղաքացիների ազատ տեղաշարժի սահմանափակումները: Այս մասին, «Կովկասպրես» լրատվական գործակալության տեղեկացմամբ, հայտարարել է Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին Սանկտ Պետերբուրգի վրաց համայնքի հետ հանդիպմանը:

Սաակաշվիլին նշել է նաեւ, որ ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթաժողովի ժամանակ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպմանը Վրաստանի նախագահի՝ Սանկտ Պետերբուրգում Վրաստանի հյուպատոսություն բացելու առաջարկն առարկություն չի ստացել: Վրաստանի հանդեպ սահմանափակումներն էլ Ռուսաստանի նախագահ Պուտինը բացատրել է տեխնիկական պատճառներով եւ վստահեցրել, որ դրանց համար քաղաքական շարժառիթներ չկան:

Ա. Հ.

Բիշքեկում զանգվածային ծեծկռտուք ղրղզների ու թուրքերի միջեւ

ԲԻՇՔԵԿ, 11 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր առավոտյան Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում զանգվածային ծեծկռտուք է տեղի ունեցել ղրղզ եւ թուրք երիտասարդների միջեւ: Այդ մասին ասված է հանրապետության ներքին գործերի նախարարության հաղորդագրության մեջ: Ըստ նախարարության տվյալների՝ ծեծկռտուքն ավարտվել է հրաձգությամբ: Վիրավորներ ու սպանվածներ չկան, բայց բախումների վայրում միլիցիոներները հայտնաբերել են 16 պարկուճ եւ «Մակարով» ատրճանակի երեք մարտական փամփուշտ: Արձակված գնդակներից մի քանիսը դիպել են մոտակայքում կայանված ավտոմեքենաներին եւ այն շենքին, որտեղ տեղավորված է պետավտոտեսչության տեխզննման կետը: Ծեծկռտուքի մասնակիցները մինչեւ միլիցիայի ուժեղացված կարգախմբերի ժամանումը հասցրել են փախչել: ՆԳՆ-ում առայժմ դժվարանում են այդ ընդհարումը անվանել միջէթնիկական կոնֆլիկտ, քանի որ անհայտ են դրա ծագման պատճառները: Դա պարզելու է հատուկ ստեղծված հետաքննչական խումբը:

PKK-ի հարցում Իրաքը պատրաստ է բանակցել Թուրքիայի հետ

ԲԱՂԴԱԴ, 11 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իրաքի կառավարությունը պատրաստ է Հյուսիսային Իրաքում Քրդստանի բանվորական կուսակցության (PKK) ծավալած գործունեության կապակցությամբ բանակցել Թուրքիայի հետ: Այս մասին հայտարարել է Իրաքի արտաքին գործերի նախարար Հոշյար Զեբարին: Իրաքի արտգործնախարարը BBC-ին հայտարարել է, թե իր կառավարությունը պատրաստ է Թուրքիայի հետ քննարկելու վերջինիս հուզող մի շարք հարցեր, այդ թվում նաեւ PKK-ի գործունեության հետ կապված, եւ նշել է, որ իրենք դեմ են ռազմական միջամտություններին. «Մենք պատրաստ ենք խոսել այդ հարցի մասին եւ դեմ ենք ռազմական միջամտություններին ու սահմանային խախտումներին: Կարելի է բանակցել բոլոր խնդիրների շուրջ եւ դրանք լուծել երկխոսության միջոցով», հայտարարել է Իրաքի արտաքին գերատեսչության ղեկավարը:

Պենտագոնը պատրաստել է Իրանին հարվածելու ծրագիր

Ամերիկյան բանակի բարձրաստիճան սպաների խոսքերը վկայակոչելով՝ «Ցերուզալեմ փոստ» թերթը հաղորդում է, որ Պենտագոնում պատրաստ է Իրանին հարվածելու ծրագիրը: Ռազմական գերատեսչությունում վստահ են, որ նախագահ Ջորջ Բուշը մինչեւ իր կառավարման ժամկետի ավարտը կձեռնարկի Իրանի միջուկային օբյեկտների ոչնչացման վճռական գործողություններ:

Պենտագոնի աղբյուրները նաեւ հայտնել են որոշ մանրամասնություններ: Նրանց խոսքերով, գլխավոր դեր է հատկացվում ամերիկյան օդուժին եւ ծովուժին: Տարբերակներից մեկի համաձայն, ծովուժը պետք է լիովին շրջափակի Իրանին, որպեսզի թույլ չտա նավթի արտահանություն:

Վճռական միջոցների ձեռնարկման կողմնակիցներ են նաեւ ամերիկացի որոշ օրենսդիրներ: Այսպես, կոնեկտիկուտցի ազդեցիկ սենատոր Ջոզեֆ Լիբերմանը հունիսի 10-ին հայտարարեց. «ԱՄՆ-ը պետք է պատրաստ լինի իրանցիների դեմ ձեռնարկելու լայնածավալ ռազմական գործողություն, որպեսզի նրանց սիրտի դադարեցնել ամերիկացիների սպանություններն Իրաքում»:



Զորավարժությունների անցկացման նպատակով մայիսի վերջերին արդեն Պարսից ծոց են մտել ամերիկյան ծովուժի ավիակիրների երկու խմբավորումներ:

«Ուղեղների արտահոսքից» օգուտ քաղելուց մինչեւ Բարեկենդան կառնավալով եվրոինտեգրում

Բերկլիում Կալիֆոռնիայի համալսարանի տեղեկատվության ֆակուլտետի դեկան **Աննա Լի Սաքսենյանը** համոզված է, որ «ուղեղների արտահոսքը» սրում է միջազգային անհավասարությունը, քանի որ զարգացած երկրները նոր հարստություններ են կուտակում զարգացող երկրների հաշվին: Ըստ 1990 թ. մարդահամարի տվյալների, ԱՄՆ-ում բնակություն է հաստատել մեծ ներուժ ունեցող 2,5 մլն ներգաղթյալ: Օրինակ, բջջային հեռախոսների խաղեր ու զանգեր մշակող «Զուլայ սիստեմս» ընկերությունը հիմնադրել են 2 հնդիկ ձեռներեցներ, գոյության առաջին 5 տարիների ընթացքում ձեռք է բերել 28 մլն դոլար՝ ամերիկացի, թայվանցի եւ հնդիկ առաջատար ներդնողներից: Սիլիկոն Վելին մեծապես շահել է օտար «ուղեղուժից», որովհետեւ Ս. Նահանգներում կրթություն ստանալու մեկնած հազարավորները, հիմնականում Ասիայից, նախընտրել են ընդունել աշխատանքի հրավերը: Ներկայումս նրանք նկատելի ազդեցություն ունեն իրենց երկրների տնտեսության զարգացման գործում՝ ուղղակիորեն ու միջնորդավորված: Այս երեւույթը դյուրին է ընթացել հատկապես Իսրայելում ու Թայվանում, իսկ երկարաժամկետ ազդեցությունը ուժգին է եղել Չինաստանում ու Հնդկաստանում: Չնայած դրան, ոչ բոլոր զարգացող երկրներն են ընդունակ օգուտ քաղելու «ուղեղների արտահոսքից», միայն նրանք, ովքեր ժամանակին խոշոր ներդրումներ են կատարել բարձրագույն կրթության ոլորտում, քաղաքականապես ու տնտեսապես բավականաչափ կայուն են՝ արտագաղթածներին տուն վերադարձնելու համար:

Սաքսենյանն այս մասին ավելի մանրամասն խոսեց կրթության ու գիտության նախարարության նախաձեռնությամբ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում երեկ սկսված «Կրթություն - 2015» երկօրյա համաժողովում: Այն անցկացնելու շարժառիթը՝ ներկայումս մշակվող կրթության ոլորտի ռազմավարական հայեցակարգն է՝ 2008-2015 թթ. ազգային ծրագրի հիմքում դնելու նկատառումով: Ենթադրելի է, որ նման համաժողովը պիտի ընթանար կառավարության ներկայացուցիչների, գերատեսչությունների, գիտության ու կրթության ոլորտի, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաեւ տարբեր երկրներից ժամանած պատվիրակների մասնակցությամբ: Կրթության նախարարի բացման խոսքից հետո, համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական **Վահրամ Ներսիսյանցը**, որի խոսքով՝ «Ներկա կրթական համակարգը դեռեւս պարունակում է մեր տարածաշրջանում դարեր գերիշխած բռնապետական քաղաքական մշակույթի բացասական երեւույթներն ու սովորույթները, որոնք փոխանցվում են սերնդե-սերունդ: Արմատական բարեփոխումների բացակայության դեպքում մենք պատրաստում ենք սերունդներ, որոնք տառապում են թերարժեքության ու անապահովության բարդույթներով, ստորաբաղձ դրսեւորումներով, նախապատրաստված կոռուպցիայի ընդունակություններով եւ մշտապես խոցելի վախի, փառասիրության եւ ագահության գործոններով, երբ Հայաստանի զարգացումը եւ բարգավաճումը պահանջում է խիզախ եւ առողջ հոգեկանով, բարձրորակ կրթությամբ, ինքնավստահ ու ստեղծագործ սերունդ:

Կրթության ոլորտի բարեփոխումների անհրաժեշտությունը նախագահի ուշադրության կենտրոնում է, եւ իր առաջնորդությամբ ու ՀՀ կառավարության ղեկավարությամբ, հանրապետության զարգացման արտաքին գործընկերների աջակցությամբ **հիմնահատակ** (ընդգծումը մերն է-խմբ.) բարեփոխումներ ենք ակնկալում»:

Կառավարության աշխատակազմի կրոնի հարցերի բաժնի պետ, ազգագրագետ **Հրանուշ Խառատյանի** կարծիքով, Հայաստանի սոցիալական վիճակը չի նպաստում կրթության որակին եւ մատչելիությանը: «Մեր հետազոտությունները վկայում են, որ Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնությունը դեռեւս չի տարբերում համայնքային սեփականությունը պետականից ու չի ընբռնում համայնքի հետ իր կապը: Չիմացության պատճառով մարդը չի կարողանում ծրագրել իր կյանքը: Շատ դժվար է դատողություններ անել կրթության ոլորտում ընդգրկվածության մասին: Դպրոց հաճախել դեռեւս չի նշանակում սովորել: Տավոտ ստի, որեւէ հետազոտություն ցույց չի տալիս, թե ինչպես են սովորում սոցիալական տարբեր շերտերի ընտանիքների երեխաները»:

Նրա առաջարկով, հանրային կրթության միջոցով պետք է լուծել նաեւ ազգային արժեքները վերահաստատելու ու տարածելու խնդիրը: Օրինակ, Բարեկենդան կառնավալի միջոցով կարելի է շարունակել էթնիկ ինքնության մշակութային բաղադրիչը, միաժամանակ ներկայացնելով եվրոպական, ասիական եւ միջինարեւելյան մշակութային առանձնահատկությունները: «Հայոց կառնավալը եղել է եւ կարող է շարունակվել որպես այդ մշակութային մոդելների կրողն ու ներկայացնողը՝ վերածվելով տարածաշրջանային միջոցառման: Լավ կազմակերպելու դեպքում կարելի է ստեղծել ոչ միայն տարածաշրջանային եւ եվրոպական ինտեգրման հնարավորություն, այլեւ՝ տնական կամ ֆոլկլորային տուրիզմի առիթ»:

Այսօր համաժողովը կշարունակի աշխատանքը, կլսվեն Ֆինլանդիայից, Ռուսաստանից, Հարավային Կորեայից ժամանած մասնագետների ելույթները, որից հետո կամփոփվեն խմբային քննարկումների արդյունքները:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Հայաստանյան մարտահրավերներ»

Դեկտեմբերին կդարձվի շարունակության հարցը

Երեկ Երեւանում բացվեց «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան»-ի («ՀՄՀ-Հայաստան») նոր գրասենյակը՝ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչի եւ Հայաստանի ֆինանսների ու էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի ձեռամբ: Ներկա էին նաեւ «ՀՄՀ-Հայաստան»-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը, ՀՄԿ Հայաստանի ծրագրի տնօրեն Ալեխ Ռասինը:

Ջոն Դանիլովիչը հայտարարեց, որ «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրով Հայաստանի համար նախատեսված մոտ 236 մլն դոլարից արդեն հատկացվել է 6 մլն-ը: Արդեն կնքված պայմանագրերի 25 մլն դոլարի ֆինանսավորումն էլ կլինի շուտով:

«Ծրագիրը լավ առաջ է ընթանում: Սկսել ենք գյուղատնտեսության բաղադրիչների շահութաբերության աճին ուղղված ուսուցումը՝ «Ջրից դեպի ուկա» գործունեության շրջանակում, եւ արդեն ավարտին են մոտենում գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրերի առաջին փուլի նախագծային աշխատանքները: Բացի այդ, հայտարարված է մրցույթ ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի նախնական փուլի նախագծային առաջարկների համար, իսկ այս ենթածրագրի շրջանակներում առաջին շինարարական աշխատանքները նախատեսվում են աշնանը», նշեց դեսպանը:

Շնորհավորելով մայիսի 12-ի ընտրությունների կապակցությամբ՝ Ջոն Դանիլովիչը նշեց. «Այս ընտրությունները կարծես դրական տեղաշարժ էին միջազգային չափանիշների ուղղությամբ, սակայն մենք շարունակում ենք ուշադիր հետեւել խախտումների մասին հնչած մեղադրանքների հետաքննման ընթացքին»: Ըստ Դանիլովիչի, ինչպես «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ ծրագրի մասնակից բոլոր երկրների, այնպես էլ Հայաստանի մասնակցության շարունակման մասին ՀՄԿ-ի խորհուրդը որոշում կկայացնի դեկտեմբերին՝ երկրների ընտրության հարցերով կայանալիք ամենամյա նիստի ժամանակ:

2006 թ. մարտի 27-ին կնքված ու սեպտեմբերի 29-ին գործողության մեջ մտած համաձայնագրով նախատեսվում է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ցուցանիշների կայուն ու տեսանելի աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գյուղական ճանապարհներում, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, գյուղացիական տնտեսություններին ու ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով:

Ա. Հ.

Սերժ Սարգսյանի խոսքը...

1-ին էջից

Արդարադատության նոր նախարար **Գեւորգ Դանիելյանը** երկար տարիներ աշխատել է դատախազության համակարգում, այդ թվում եղել է պետական շահերի պաշտպանության վարչության պետ, ապա գլխավոր դատախազի տեղակալ: Դատախազության համակարգից եւ դրանում զբաղեցրած պաշտոններից դատելով, կարելի էր ենթադրել, որ նա պետք է հայտնի լիներ դրական կամ բացասական վարկանիշով, բայց նա կարծես թե առանձնապես աչքի չի ընկել ոչ դրական, ոչ էլ ընդգծված բացասական գործունեությամբ:

Սերժ Սարգսյանի ղեկավարած նոր կառավարության մեջ, մեղմ ասած, ամենատարօրինակը բնապահպանության նոր նախարարի պաշտոնում քաղաքաշինության նախկին նախարար **Արամ Հարությունյանի** նշանակումն էր: Նման մի քայլ մի քանի տարի առաջ կատարեց Ռոբերտ Քոչարյանը՝ պետեկամուտների ու տրանսպորտի եւ կապի նախարարներ Երվանդ Զախարյանին եւ Անդրանիկ Մանուկյանին նշանակելով մեկը մյուսի նախկին պաշտոնին: Սա փաստորեն նմանատիպ երկրորդ դեպքն է, որը ոչ մի հիմնավորում չունի: Քաղաքաշինությունն ու բնապահպանությունը բացառապես տարբեր ոլորտներ են եւ Արամ Հարությունյանն էլ հատատապես կազմակերպչական բացառիկ ունակություններով օժտված անձ չէ, որի համար միեւնույն է, թե որ նախարարությունը կղեկավարի:

Նորաստեղծ պոտրտի եւ երիտասարդության նախարարության ստեղծման նպատակահարմարության շուրջը կարելի է վիճել, բայց՝ անիմաստ է դա անել, քանի որ այդ քայլն արվել է ոչ թե տվյալ ոլորտների միմյանց մոտ լինելը նկատի ունենալով, այլ դարձյալ քաղաքական շարժառիթներով: Այն է՝ «Բարգավաճ Հայաստանին» նախարարական պաշտոն տալու նպատակով: Նոր նախարար **Արմեն Գրիգորյանը** լայն հասարակությանն անհայտ է, բայց ֆիզիկական կուլտուրայի եւ պոտրտի ասպարեզում ճանաչված է եւ երկար ժամանակ զբաղեցրել է վարչության պետի, ապա պոտրտեկոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնը: Նշենք, որ նա սուպերամարտի մասնագետ է:

Քաղաքաշինության նորանշանակ նախարար **Վարդան Վարդանյանը** մինչ այդ աշխատել է որպես տրանսպորտի եւ կապի փոխնախարար: Սակայն, դատելով պաշտոնապես հրապարակված նրա կենսագրությունից, նա, մինչ նախորդ եւ ներկա պաշտոններում նշանակվելը, ոչ մասնագիտացմամբ, ոչ աշխատանքային կենսագրությամբ որեւէ առնչություն չի ունեցել այդ ոլորտների հետ: Սրան էլ հավելենք, որ քաղաքաշինության նախարարության գոյությունը վաղուց անիմաստ է դարձել, եւ այն շարունակում է գոյատեւել միայն այս կամ այն քաղաքական ուժի նախարարական պահանջները բավարարելու նպատակով: Նախորդ ընտրություններից հետո այդ քաղաքական ուժն այսօր ընդդիմություն ձեւացող «Օրինաց երկիրն» էր, այժմ՝ «Բարգավաճ Հայաստանը»:

Եվ վերջապես, Սերժ Սարգսյանի մատուցած ամենաանցանկալի անակնկալի մասին: Հակառակ համառորեն պտտվող լուրերի, տարածքային կառավարման նախարար **Հովիկ Աբրահամյանը** չազատվեց իր պաշտոնից: Ավելին, նա պաշտոնապես ստացավ փոխվարչապետի լիազորությունները: Ասել, որ Հովիկ Աբրահամյանը բացարձակապես չի համապատասխանում իր զբաղեցրած պաշտոնին եւ դիրքին, նշանակում է ոչինչ չասել: Վերին իշխանության մեջ նրա ընդգրկված լինելը նշանակում է, որ մեր երկիրը դեռ շատ հեռու է քաղաքական մշակույթի ավանդույթներ ունեցող երկիր համարվելուց:

Նոր կառավարության կազմում իրենց պաշտոններում մնացած մյուս նախարարներին անդրադառնալու անհրաժեշտություն թերեւս չկա, քանզի հասարակությունն արդեն իսկ ճանաչում է նրանց եւ համապատասխան վերաբերմունք ունի յուրաքանչյուրի նկատմամբ:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Միավորվում են Ռուսաստանի հայ կանայք

Հունիսի 8-ին «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության նախաձեռնությամբ Մոսկվայում տեղի է ունեցել Ռուսաստանի հայ կանանց միության հիմնադիր համագումարը: Ռուսաստանի «Երկրամաս» թերթի տեղեկացմամբ, նոր հիմնադրված այս ընկերությունը ներկայացնում է 1910 թ.-ից գործող «Հայ օգնության միություն» կանանց համահայկական կազմակերպության ռուսաստանյան կառույցը: Այսպիսով, Ռուսաստանը դարձավ 25-րդ երկիրը, որտեղ գործում է Հայ օգնության միությունը: Ռուսաստանյան կառույցը կներկայացնի մոսկովյան թիվ 1888 հանրակրթական դպրոցի տնօրեն Արմինե Առաքելյանը:

Ա. Հ.

Էներգետիկայի փոխնախարարի վիճակը կայուն է

Ինչպես տեղեկացանք էներգետիկայի նախարարության լրատվական ծառայությունից, ուղղաթիռի վթարային վայրէջքի հետեւանքով վիրահատության ենթարկված էներգետիկայի փոխնախարար Արեգ Գալստյանի վիճակը կայուն է: Երեկ նա դեռ գտնվում էր Սիսիանի հոսպիտալում, բայց շուտով կտեղափոխվի Երեւան:

Հիշեցնենք, որ հունիսի 9-ին էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանին եւ փոխնախարար Արեգ Գալստյանին Սյունիքի մարզ տեղափոխող Մի-8 ուղղաթիռը ուժեղ քամու պատճառով հարկադրված է եղել վթարային վայրէջք կատարել, որի հետեւանքով նախարարը ստացել էր թեթեւ վնասվածքներ, իսկ փոխնախարարին ստիպված վիրահատել են՝ ներորովայնային արյունահոսությունը կանխելու համար:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժե տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Հաճախորդ. ծառայություն / հեռ 582483
Շտաբաբաժնի լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Հաճախորդային շարասթը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ի՞նչ արժե բորշը՝ այն էլ առանց թթվասերի

Հեղինուհական թանկացումնե՞ր, թե ժողովրդին հիմարացնելու հերթական քայլ



«Էս գներով հնարավո՞ր է ամեն օր ոսմիդոր առնել, բալի կիլոն 1200 է, կարտոֆիլը նոր-նոր մի փիչ էժանացել է, բայց էլի թանկ է: Հնարավո՞ր է աղրել մի ստից թոշակով: Էս ընտրություններից հետո թանկացավ, թե ինչ, չգիտեմ: Ո՞նց է ժողովուրդն աղրելու էս կրակ թանկության մեջ», «**Ազգին**» ասում է շուկա գնումների եկած Ժաննա տատիկը, որը կանգնած մտորում էր, թե ինչ գնի: «Լոլիկ գնե՞լ եմ այս տարի» մեր հարցին տատիկն արձագանգում է. «Ոչ էլ կառնեմ, էդ գնով կարա՞ն իմ նման խեղճերը ոսմիդոր առնեն»:

Շուկայում դեռ իր առեւտուրը չսկսած Սարգիս ոսմիկը մթերի թանկացումը խաղաղականացնում է: «Լրիվ էս ընտրություններից հետո ըսենց էղավ: Հացը 10 դրամով թանկացրին, որն էլ չեն թանկացրել, երեսի խաշն են էֆացրել: Ամեն ինչ թանկացրել էն: Բա էդ ընտրությունների ժամանակ, որ էդքան բաժանեցին, հիմա չոմիտի էլի ժողովրդից հանե՞ն»: Ինչ վերաբերում է միրգ-բանջարեղենի սարսափելի գներին, Սարգիս ոսմիկը նկատում է. «Դե, գնալով կյանքը թանկանում է: Էս ժողովրդին ձեռ են առնում, մեր հոդից ստացած բերին է՞լ էդքան թանկ կծախեն: Ոնց էլ արդարանան, սխալ են, ժողովուրդը մեղմ է»:

Սննդի, մթերքների սարսափելի գներն այսօր յուրաքանչյուր ընտանիքի հոգսն են: Տնտեսական «վագրային» աճի, ընտրությունների «հսկայական» առաջընթացի եւ մեր երկրում արձանագրված մյուս հաջողությունների ֆոնին անգամ՝ նկատի ունենք այնոմիսի հաջողություններ, որոնք ժողովուրդը ոչ միայն չի զգում, այլեւ որեւէ կապ չունի այդ ամենի հետ, անհնար է, որ չընկնի անելանելի վիճակի մեջ: 10 դրամով թանկացել են հացի որոշ տեսակներ, իսկ որն էլ չի թանկացել, բնակչությունը կասկած ունի, որ քաշի մեջ է փոփոխություն եղել: Մի քանի բնակիչներ էլ արդեն նկատել են, որ բարձրացել են նաեւ մակարոնեղենի, այլուրի, անգամ աղի գները:

Իսկ բանջարեղենի եւ մրգերի ասղաբաշխական գներն էլ անգամ թույլ չեն տալիս մոտենալ դրանց: Մեկ կիլոգրամ լոլիկի գինը այս օրերին 1200-1500 դրամից իբր էժանացել եւ դարձել է 6-7 հարյուր դրամ: Բավական բարձր են կարտոֆիլի (350, 400 դրամից), սմբուկի (մեկ հատը 200 կամ 250 դրամ) եւ մյուս բանջարեղենների գները: Այս գների պարագայում ամենասովորական բորշն անգամ շատերի համար կարող է անհասանելի լինել: Կաղամբի գները սկսվում են 200-250 դրամից (1 կգ-ն), նույնքան էլ արժե բազուկը, իսկ գազարի 1 կգ-ն արժե 5-6 հարյուր դրամ: Արդեն ինքներդ կարող եք հաշվել, թե ինչ կարժենա բորշը, այն էլ առանց թթվասերի:

Անասելի բարձր են նաեւ մրգերի գները: Անհյութալի խնձորն անգամ «երանելի» գին ունի. ամենաէժան խնձորի 1 կգ-ի արժեքը սկսվում է լավագույն դեպքում 350 դրամից: Շատ փիչ՝ այն էլ «էլիտար» շուկաներում կարելի է արդեն հանդիպել նաեւ ծիրանի եւ մի քանի այլ մրգերի, որոնց գների մասին խոսել նույնիսկ չարժե:

Երեկ շուկայի վաճառողուհիներից մեկը մեզ հետ զրույցում «արդարացրեց» գյուղմթերքների գները: Երբ մենք զրուցում էինք, դրսում ահագնացող անձրեւ էր, որն էլ դարձավ գյուղմթերքների սարսափելի գների արդարացման հիմնական առանցքը: «Գյուղացու բերքը լրիվ փչացել է: Շատ փիչ է մնացել, էն էլ պարզ չէ՞, որ թանկ գնով պիտի տա», բացատրեց նա մեզ: «Իսկ էս գներով ժողովուրդը կարողանո՞ւմ է ինչ-որ բան գնել» մեր հարցին վաճառողուհին արձագանգում է. «Ճիշտն ասած, տարին տարվա վրա ժողովրդի գնողունակությունը բարձրանում է, չես համեմատի մի 7-8 տարի առաջվա հետ: Բայց դե էլի շատ փիչ են առնում»: Տիկնոջ կողքը կանգնած մյուս վաճառողուհին էլ ակնհայտ դժգոհությամբ վրա է բերում. «Ոչ մի հատ էլ չեն առնում: Մարդիկ սպասում են մինչեւ 7 հարյուր դրամանոց պոմիդորը դառնա 70 դրամ, նոր առնեն»:

Շուկան դառնում է մի այնպիսի վայր, որտեղ 5 հազար դրամ ունենալով ոչ միայն չարժե, այլեւ շատ անարդյունավետ է մտնելը, քանի որ նյարդայնանալուց բացի ոչնչի չես հասնի: Իսկ հասարակության մի լայն շերտ, այդ թվում կենսաթոշակառուները իրենց թոշակով ոչ միայն ամեն օր, այլեւ ամիսը մեկ անգամ չեն կարող իրենց այդպիսի հաճույք թույլ տալ՝ սպասելով երեքի նման, որ տնտեսական երկնիշ աճ կամ «վագրային» թռիչք ապրող տնտեսություն ունեցող մեր երկրում մի օր ինքն էլ կկարողանա արժանավայել ապրել:

Հա, ժողովուրդն օրվա սնունդը հոգալու հոգսից բացի այլ հոգս էլ ունեցավ: Արդեն լսել է, որ թանկանալու է նաեւ հեռախոսի ամսավճարը: «Արմենտելը» արդեն դիմել է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ հեռախոսավարձի 1100 դրամ արժեքը 2 հազար դարձնելու առաջարկով: Ճիշտ է, առաջարկի հետ ուրիշ լավ լավ առաջարկներ էլ կան, ու բացի այդ դեռ հանձնաժողովն էլ պիտի մի լավ տնտի առաջակը ու նոր որոշումը կայացնի, բայց դե ժողովուրդը իր տեսածով է դատում:

ԳՈՏԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քոչարյան-Ալիեւ երեքշաբթի հանդիպումը չբերեց համաձայնության

1-ին էջից

Ըստ Օսկանյանի, բանակցային գործընթացը կշարունակվի Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների մակարդակով, սակայն կբերի՞ դա այս տարի Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եւս մեկ հանդիպման՝ դժվար է ասել:

Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովն էլ, իր հերթին, նշել է կողմերի դիրքորոշումները ներկայացնելու մասին ու հավելել, որ «շրջադարձ» չի եղել:

Հետաքրքրական է, որ «Ազատություն» ռադիոկայանի տեղեկություններով, հանդիպման ժամանակ նախագահներին չի հաջողվել համաձայնության գալ մի քանի հիմնական խնդիրներում, որոնցից կարեւորագույնը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակն է:

Ադրբեջանական կողմը պնդել է, որ միջանկյալ համաձայնագրում Ղարաբաղի կարգավիճակի մասին ընդհանրապես որեւէ կետ չլինի: Հայկական կողմը պնդել է, որ անպայման պետք է նշված լինի այն մեխանիզմը, որով անցկացվելու է հանրաքվեն Լեռնային Ղարաբաղում, եւ այն ձեւը, որով որոշվելու է Ղարաբաղի կարգավիճակը:

«Հանրային ռադիոն» էլ տեղեկացնում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն նշել է, որ երկու կողմերին առաջարկվել են հակամարտության կարգավորման նոր, այլընտրանքային ճանապարհներ, որոնք կողմերը դեռ պետք է քննարկեն: «Բանակցությունները կշարունակվեն», ավելացրել է Ֆասիեն: Իսկ Ռոբերտ Քոչարյանն ու Իլհամ Ալիեւը, նաեւ ԵԱՀԿ Մինսկի խումբը հրաժարվել են մեկնաբանություններից ու որեւէ հայտարարություն չեն արել պետերբուրգյան հանդիպման առնչությամբ:

Այն, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների կողմերը տարբեր առիթներով, ԵԱՀԿ Մինսկի համանախագահներն էլ տարածաշրջան այցելությունների ժամանակ հայտարարում էին մեծաթիվ համաձայնեցված հիմնարար սկզբունքների մասին, կարելի է համարել իրականությանը չհամապատասխանող, կամ էլ պետերբուրգյան հանդիպմանը ինչ-որ բան տեղի է ունեցել՝ փոփոխելով համաձայնեցված կետերի չափաբաժինը: Այլապես սպասվում է, որ չճշված տեղեկություններով, դեռ չհամաձայնեցված է մնում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, որը բնավ էլ չի կարելի համարել եղած մի քանի սկզբունքների համեմատությամբ ամենափոքր կշիռն ունեցողը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆ

«Բի լայնի» տնօրենը խաբս է տալիս, իսկ դատարանը դեռ քննում է հարցը

Երբ 2006 թվականի հոկտեմբերի 16-ին «Բի լայն» ՍՊԸ-ի տնօրեն Արսակ Զաքարյանն իր «Սուզուկի» մակնիշի 959 OL 64 պետհամարանիշի մեքենայով հարվածեց մեր թերթի աշխատակցուհի Մարիետա Մակարյանին, թերեւս սույգ չպատկերացնելով, թե ինչ է անում, հենց դեպքից որպեսզի անց փորձեց Մ. Մակարյանին համոզել, որ վերջինս «գործ չէա միլիցեին», քանի որ ինքը մարդիկ ունի վերեւներում, որոնք կօգնեն իրեն դուրս գալ ստեղծված իրավիճակից: Նա խոստացավ այցելել Մ. Մակարյանին եւ անհրաժեշտ բոլոր ծախսերը հոգալ բուժման համար, քանի որ Մ. Մակարյանը բավականին վնասվածքներ, այդ թվում եւ հոգեկան մեծ սթրես էր ստացել: Սակայն Մ. Մակարյանին «հանցավոր» մեքենայով տուն հասցնելուց հետո, Արսակ Զաքարյանը չի էլ զանգահարել եւ բավականին հիմնավոր կերպով ջնջել է իր հիշողությունից ու մարդկային խղճից այն փաստը, որ ինքը երթեւեկության կանոնները խախտելով, մազ էր մնացել, որ դառնար ակամա մարդասպան:

Մինչ Մ. Մակարյանը հարյուր հազարավոր դրամներ էր ծախսում սեփական առողջությունը վերականգնելու համար, ոչ ոք չի կարող ստույգ ասել, թե ինչպիսի՞ զգացումներով էր գլուխը բարձին դնում կամ էլ հայելու մեջ ինքն իրեն նայում նրան վրաերթի ենթարկած Արսակ Զաքարյանը: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, վերջինս ինչպես խոստացել էր մի շրջապատում, գերադասեց «միլիցեին ուսացնել» Մ. Մակարյանի պահանջած փոխհատուցման գումարը, քան օգնել տուժածին: Ի վերջո, Մ. Մակարյանը գործ է հարուցել Ա. Զաքարյանի դեմ, որը փորձել են կարճել, իբր թե «ավտովարորդ Արսակ Զաքարյանի գործողություններում հանցակազմի բացակայություն» կա: Մ. Մակարյանը գնացել է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի մոտ, որը ինքնիշի որոշումը չեղյալ է հայտարարել: Երեկ Կենտրոն եւ Նորք Մարաշ առաջին ատյանի դատարանում (դատավոր Գայանե Կարախանյան) կայացել է դատական առաջին նիստը: Պատասխանող կողմի իրավաբաշտան Տիգրան Հարությունյանը, որն, ի դեպ, նախկին արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի եղբայրն է, կարողացել է մեծ երեւակայություն դրսեւորել, կասկածելով, որ Մ. Մակարյանը բավականին էլ առողջ է եղել, քանի որ այդ օրերին նա հրապարակումներով հանդես է եկել «**Ազգ**» օրաթերթում: Թերեւս արժեր մեր թերթի ուշադիր այդ ընթերցողին գովել ընթերցասիրության համար, սակայն հարկ կա՞ հիշեցնելու, որ լրագրողը կարող է նյութեր պատրաստել նաեւ հեռախոսով կամ նախկինում հավաքած փաստերի հիման վրա: Դրա համար կարելի է նաեւ տնից դուրս էլ չգալ՝ կապ պահպանելով ինտերնետի եւ հեռախոսի միջոցով: Իսկ ինչ մնում է պատասխանող կողմի կասկածամտությանը, թե դեղատնից ձեռքբերված կտրոնները դեռ չեն ապացուցում, որ Մ. Մակարյանը դեղատնից դեղեր եւ բուժամիջոցներ է գնել եւ ընդունել՝ առողջությունը վերականգնելու նպատակով, պարզապես խոսում է պատասխանող կողմի հիվանդագին երեւակայության եւ վնասված խղճի մասին: Դատական նիստն ընթացավ երկու կողմերի փաստաբանների առարկություններով ու միջնորդություններով: Դրանցից մեկի հիման վրա էլ դատական նիստի լսումը հետաձգվեց մինչեւ հունիսի 22-ը, ժամը 12.00:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. Գ.-Ի դեպ, Մ. Մակարյանի առողջական վիճակը կտրուկ վատթարացավ նաեւ դատավարությունից հետո, երբ հենց խմբագրությունում, մեր աչքի առաջ, մեր գործընկերուհին հոգեկան լարվածությունից եւ նյարդայնությունից կորցրեց գիտակցությունը: Կարծում ենք, որ շտապօգնության ցույց տված բուժօգնությունն ու խմբագրակազմի վկայությունները պետք կլինեն Մարիետա Մակարյանին հասցված վնասների եւ դրանց հետեւանքների շարքին:

Նոր ընտրություններ Թալինի 15-րդ ընտրատարածքում

Օգոստոսի 26-ին թիվ 15 ընտրատարածքում ընտրություններ են լինելու: Օրը նշանակել է Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) երեկ, հունիսի 11-ին կայացած նիստում համապատասխան որոշում կայացնելով: Նոր ընտրություններ նշանակելու հիմքը թիվ 15 ընտրատարածքում պատգամավորության մեծամասնական թեկնածու առաջադրված, մայիսի 12-ի քվեարկության պաշտոնական տվյալով հաղթած, այնուհետեւ պատգամավորական մանդատից հրաժարված Խաչիկ Մանուկյանի դիմումն է: Հիշեցնենք, որ Թալինի 15 ընտրատարածքում Խաչիկ Մանուկյանի մրցակիցը մայիսի 12-ի խորհրդարանի ընտրությանը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածուն էր, որը բողոքարկել էր ընտրության արդյունքը: Հետո, սակայն, զանգվածային ցույցերը դադարեցրեց թեկնածուն, ԿԸՀ-ն էլ ուժի մեջ թողեց թիվ 15 ընտրատարածքի պաշտոնական տվյալը: Հաջորդեց ԿԸՀ նախագահի հայտարարությունը հունիսի 6-ին, թե Խաչիկ Մանուկյանը դիմել է մանդատից հրաժարվելու դիմումով: Մանուկյանն էլ իր հերթին նույն օրը ի պատասխան լրատվամիջոցների հարցին հայտարարել էր, թե մանդատից հրաժարվելու ԿԸՀ ներկայացրած իր դիմումին տեղյակ չէ: Երեք օր անց, հունիսի 9-ին իրականությունը նորից փոխվել էր՝ Խաչիկ Մանուկյանը ասուլիս էր հրավիրել եւ փորձել մանդատից իր հրաժարումը հիմնավորել բացատրելով, թե քանի որ թիվ 15 ընտրատարածքում ընտրության արդարությունը մեծ կասկած է առաջացրել, հետեւաբար ինքը ցանկանում է հրաժարվել եւ մասնակցել նոր ընտրության՝ հանուն համոզիչ հաղթանակի:

Հայաստանի Հանրապետական կուսակցության 26 ներկայացուցիչ էլ դիմել է ԿԸՀ դուրս գալու կուսակցության համամասնական ցուցակից, քանի որ պատշաճավարելու են որոշես նախարար եւ այլ պատշոններում: Դիմումները, սակայն բացի Սերժ Սարգսյանի դիմումից ներկայացման ժամկետ չունեն: Այս առնչությամբ ԿԸՀ Արդարություն դաշինքի անդամ Ֆելիքս Խաչատրյանի հանձնաժողովի ղեկավարությանը հարցն անպատասխան թողեցին ե՛ւ ԿԸՀ նախագահ Գարեգին Ազարյանը ե՛ւ նրա տեղակալ Աբրահամ Բախչինյանը: Ֆելիքս Խաչատրյանը չբացառեց, որ առանց ներկայացման ժամկետի դիմումները հնարավոր է ներկայացվել են ընտրություններից առաջ, ինչը օրենքի խախտում է:

Ն. Պ.

«ԻՆՆԱ-Գրուպ» ՍՊԸ-ն Երեւանի «Ադամանդ» աղրանքահումքային բորսայի հարթակում կազմակերպում է «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառք:

Բնակելի տուն, ընդ. մակ.՝ 975,6 ք.մ., հողամասի չափը՝ 0,0962 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր համայնք, Ն. Դումանի փող., տուն 2:

Մեկնարկային գինը՝ 151077000 դրամ:

Աճուրդի փուլերը դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով 13.07.2007թ.-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13:00-ից մինչեւ 30.12.2007թ.-ը՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բորսա՝ հեռ. 56-31-15:

Երկու ուշագրավ հրատարակություն

Սերգո Երիցյան. «Հեռուստալրագրողը անցյալի տարեգիրն է, ապագան կանխատեսողը»

Կասկածից վեր է, որ հեռուստատեսությունը, ռադիոն, տպագիր մամուլը եւ զանգվածային մյուս լրատվամիջոցները մեր կենսակերպի կարեւորագույն բաղկացուցիչն են դարձել: Կյանքի այսօրվա խելահեղ ռիթմը թելադրում է սանձալ արագ եւ օպերատիվ տեղեկույթ, ուզում ենք նաեւ որ այն մատուցվի գունեղ ու բարձր պրոֆեսիոնալիզմով: Կյանքը, այո՛, փոխվել է: Մարդն է փոխվել: Դեռ երեկ, թվում է, մենք այսքան կարիք չունեինք տեղեկատվության, համենայն դեպս լուրերի առումով: Առօրյան մեր հանգիստ էր: Անհամբերությամբ էինք սպասում թերթի կամ հանդեսի հաջորդ հեռաբրերական հրապարակմանը, մատենաշարի հերթական հատորին կամ շապիկում թատերական պրեմիերայի, իսկ տանը՝ հեռուստատեսային բազմազան ուսանելի հաղորդումներին, կիրակնօրյա ռադիոթատրոններին եւ այլն, եւ այլն: Օդում կար բանավեճ գեղեցիկի, վեհի մասին ... կարդում էինք...սովորում: Այսօր...այսօր այդ բանավեճը վերածվել է «բանակռվի»՝ հեղեղելով մեր զանգվածային լրատվամիջոցները: Այս կռվում տարալուծվել է մարդը, սովորական մարդը՝ իր հույզերով ու հոգսերով. փոխարենն ունենք «խոսող գլուխներ» եւ բառե՜ր, բառե՜ր, բառե՜ր: Բոլորս մի ուղի ենք դուրս եկել, որոնումներով լի մի ուղի, ուղի՝ ինքնաճանաչման ու ինքնահաստատման: Ուզենք թե չուզենք 21-րդ դարը, հիրավի, տեղեկատվության դար է: Այո՛, այդպես է՝ իր դրականով ու բացասականով: Ժամանակի հրամայականն է: Իր բնույթով այդ բեռը մեծաթես իր ուսերին է կրում հեռուստատեսությունը. մենք ամեն օր զգում ենք, պահանջ ունենք նրա ներկայության: Եվ այսօր առավել, քան երբեւէ կարեւորվում է տեղեկատվական ոլորտում՝ զանգվածային լրատվամիջոցներում աշխատող մարդու կերպարը. ինչպիսի՞ն պիտի լինի նրա մարդկային նկարագիրը, ինչպիսի՞ մասնագիտական ունակությունների ու հմտությունների պիտի տիրապետի, որո՞նք են ոլորտի հիմնախնդիրները, նրա զարգացման ուղղություններն ու հեռանկարները:

Ահա այս մտահոգություններով ու բազում այլ հարցադրումներով է մեզ ներկայանում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վաստակաւոր հեռուստալրագրող Սերգո Երիցյանը իր երկու արժեքավոր մենագրություններով՝ «Հեռուստատեսային մասնագիտություններ. կրթությունից մինչեւ վարպետություն» («Էդիթ-փրինթ» հրատարակչություն) եւ «Հայաստանի հեռուստատեսություն. զարգացման 50 տարի» («Տիգրան Մեծ» հրատարակչություն»): Անշուշտ, սրանք հեղինակի՝ ոլորտին առնչվող առաջին խոսքը չեն: Սրանց նախորդել են «Խոհեր՝ կադրից դուրս. հեռուստալրագրության տեսության եւ պրակտիկայի հարցեր» (2002), «Հեռուստատեսության առանձնահատկությունները. արտահայտչամիջոցները եւ հնարավորությունները» (2004) եւ «Հեռուստատեսություն. գործառույթները, զարգացման միտումները եւ հեռանկարները» (Երեւան, 2005) տեսական ու գործնական ուղղվածության աշխատությունները:

Ընթերցողի սեղանին դրվող մենագրություններից առաջինը՝ «Հեռուստատեսային մասնագիտություններ. կրթությունից մինչեւ վարպետություն», իր յուրօրինակ կառուցվածքով ու հանրամատչելի շարադրանքով փորձ է հնարավորինս ամբողջական ներկայացնելու հեռուստատեսային այն բազմազան մասնագիտությունները, որոնց վարպետ գործադրմամբ պիտի կայանա հեռուստաեթերը: Իսկ մինչեւ վարպետություն կրթության տեւական ու բարդաջան ճանապարհն է, որի բավիղներով մեզ ուղեկցում է հեղինակը:

Հեղինակն ընթերցողին ծանոթացնում է ռեժիսորի եւ օպերատորի, մոնտաժողի ու հնչյունային ռեժիսորի, խոսնակ-լրագրողի ու խմբագիր-պրոդյուսերի, ռեպորտյորների, հեռուստամեկնաբանի ու տեսաբանի, հարցազրուցավարի եւ այլոց մասնագիտության արհեստին ու արվեստին, շարունակում է լրագրողական կադրերի պատրաստման արդյունավետ եղանակների մասին ավանդական բանավեճը՝ փորձելով իր խոհերը կիսել այս կարեւոր խնդրի շուրջ: Հեղինակի տեսական հարցադրումներում մեթոդաբար գերակայում է նույն կայուն դիրքորոշումը. նորը լավ մոռացված հինն է, իսկ «հնում,» պրոֆեսիոնալիզմն էր, բարձր պատասխանատվությունը ֆեզ վստահված գործի հանդեպ, կոլեկտիվ՝ թիմային մտածողությունը:

Հարցադրումների տողերի արանքում հեղինակը շարունակ հիշեցնում է, որ լրագրողներն իրենց ժամանակաշրջանի եւ՝ տատմայրերն են, եւ՝ գերեզմանափորները: Եվ բոլորովին չստվերելով նաեւ մյուս մասնագիտությունները՝ նրա համար, այնուամենայնիվ, հեռուստատեսային բազմաթիվ մասնագիտությունների թագն ու պսակը իրավամբ մնում է դարձյալ հեռուստալրագրողը. ինչպես ինքն է նշում՝ «....հեռուստալրագրողը անցյալի տարեգիրն է, ապագան կանխատեսողը»:

Մենագրության գլուխներից մեկը նվիրված է հեռուստալրագրողի էթիկային, ներկայացված են ինչպես հայաստանյան, այնպես էլ եվրոպական մի շարք երկրների կողմից լրագրողի վարքականոնների վավերացված նմուշներ, որտեղ ընթերցողը կգտնի այնպիսի հարցերի պատասխաններ, թե ի՞նչ է մասնագիտական պարտքն ու պատասխանատվությունը, մասնագիտական խիղճն ու արժանապատվությունը, մասնագիտական բարոյականության սկզբունքները:

Հեղինակի հաջորդ մենագրությունը, որ կրում է «Հայաստանի հեռուստատեսություն. զարգացման 50 տարի» վերնագիրը, բաղկացած է երկու մասից: Առաջինում Հայաստանի հեռուստատեսության անցած հիսնամյա պատմությունն է, սակայն պատմությունը՝ ոչ ժամանակագրական ընդգծված հաջորդականությամբ: Հեղինակը խոյլել է այդ զարգացման գագաթներով՝ շրջանցելով բլրակները, այս դեպքում էլ հավատարիմ մնալով իր ոճին: Պատմությունն այդ համեմված է հարցազրույցմիջարկություններով Հայաստանի հեռուստատեսության երախտավորների հետ, ուշագրավ վիճակագրական տվյալներով հեռուստաընկերությունների միջին լսարանի մասին, որն ընթերցանությունը դարձնում է գրավիչ ու շարժուն: Խիստ ընդգծված է հեղինակի խոր ակնածանքն ու երախտագիտությունը մեր հեռուստատեսության ստեղծման ակունքների մոտ կանգնածների նկատմամբ. հեղինակը ջանք չի խնայել հիշատակելու բոլորին:

Գրքի երկրորդ մասը նվիրված է հեռուստառադիոյի լավագույն երախտավորներից մեկին՝ Խորհրդային Հայաստանի հեռուստառադիոընկերությունը 18 տարի ղեկավարած Ստեփան Պողոսյանին: Հերոսն ինքն է պատմում իր կյանքը, սակայն այստեղ էլ զգացվում է հեղինակի սերտ ներկայությունը՝ իր ուղղորդող հարցադրումներով: Եվ հարցուպատասխանի այս թելերով էլ հյուսվում է Ստեփան Պողոսյան մարդու կյանքի կտավը: Ստեփան Պողոսյանն այն մարդկանցից է, որ վայրիվերումներով լի երկու տասնամյակի այս հեռավորությունից անգամ մեր հեռուսակամարում ասդղի պես դեռ շողում է նրա պայծառ կերպարը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Հայաստանի հեռուստատեսության հիսնամյա պատմության կողքին հեղինակը շարադրել է պատմությունը մի մարդու, որն այդ հինգ տասնամյակից գրեթե երկուսը կերտել է այն: Սա նաեւ Երիցյան-հեռուստալրագրողի երախտիքի տուրքն է իր ուսուցչին ու գործընկերոջը:

Հավելենք նաեւ, որ գրքի «Հավելված» բաժնում զետեղված են հեռուստառադիոյի ոլորտը կանոնակարգող օրենքներ, կարգեր, որոշումներ, հեռահաղորդակցություն իրականացնող արտոնագրված հեռուստառադիոընկերությունների ցանկեր:

Եզրափակելով մեր խոսքը՝ ուզում ենք փաստել, որ ի դեմս Սերգո Երիցյան հեռուստալրագրության պրակտիկի մենք տեսնում ենք նաեւ նրա լավագույն տեսաբանին, որի պրոցուն միտքն ու նախանձելի աշխատասիրությունը դեռ իրենց նպաստը կբերեն մեր հեռուստաաշխարհի լիարժեք կայացման նվիրական գործին:

Հ.Գ. Երբ պատրաստ էր մեր խոսքը, հեղինակից տեղեկացանք, որ շուտով ընթերցողի սեղանին է դրվելու նրա նոր տեսական աշխատությունը՝ նվիրված հեռուստատեսային ժանրերին եւ հաղորդատեսակներին:

Մի ուշագրավ լուր եւս. օրերս լրացավ նաեւ հեղինակի 50-ամյակը: Շնորհավորենք մեր հոբելյարին՝ մաղթելով նրան հաջառողջություն ու բեղմնավոր գրիչ:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու,
Հայաստանի ժառանգավորների միության անդամ

ՀՈԲԵԼՅԱՆ

Հայկական կենսաֆիզիկական դպրոցի հիմնադիրը

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Լրացավ Հայկական կենսաֆիզիկական դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս գիտական ու մանկավարժ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանի ծննդյան 100-ամյակը:

Հ. Բունիաթյանը ծնվել է 1907 թ. Նոր Բայազետում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում: Այնուհետեւ տեղափոխվել է Երեւան եւ ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, Երեւանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը եւ սկսել աշխատել որպես կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, այնուհետեւ ղեկավարել է Երեւանի անատոմաբուծական-անատոմաբուժական եւ ավելի քան երկու տասնամյակ՝ բժշկական ինստիտուտի կենսաֆիզիկայի ամբիոնը: 1939-1941 թթ. Հ. Բունիաթյանը Երեւանի բժշկական ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալն էր: 1942-46 թթ. Երեւանի պետական համալսարանի ռեկտորն էր: Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կազմակերպման հենց սկզբից ընտրվում է ակադեմիայի իսկական անդամ եւ կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Այնուհետեւ ընտրվում է ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղարի եւ ապա փոխպրեզիդենտի պաշտոններում: 1943 թվականից ակադեմիկոս Հ. Բունիաթյանը ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենսաֆիզիկայի սեկտորը, իսկ 1961 թ. մինչեւ իր կյանքի վերջը նա հանդիսանում էր իր կողմից հիմնադրված ՀՀ ԳԱԱ կենսաֆիզիկայի ինստիտուտի տնօրենն էր, որը կարճատեւ ժամանակամիջոցում աճելով վերածվեց նյարդաֆիզիկական խոշոր կենտրոնի եւ լայն ճանաչում ստացավ ոչ միայն Խորհրդային Միությունում, այլեւ ամբողջ աշխարհում: Մեր հանրապետությունում նա առաջինը, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի հետ միասին, ձեռնամուխ եղավ վիտամինների կենսաֆիզիկայի հետազոտությանը: Այդ աշխատանքներով բացահայտվեց ասկորբինաթթվի հակաօքսիդանտային հատկությունը:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ ԳԱԱ կենսաֆիզիկայի ինստիտուտում ժամանակակից բարձր մակարդակով կատարված աշխատանքները լայն ճանաչում են գտել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում: Հ. Բունիաթյանի եւ նրա աշակերտների կողմից ինստիտուտում զգալի հաջողություններ են ձեռք բերվել ուղեղի հյուսվածքի կենսաֆիզիկական մի շարք նուրբ մեխանիզմների բացահայտման եւ ստացված արդյունքները բժշկության մեջ ներդնելու ուղղությամբ:

Հ. Բունիաթյանը եւ նրա աշակերտները ուշագրավ հետազոտություններ են կատարել էներգետիկ եւ ազոտային փոխանակության կարեւորագույն ռեակցիաներում գլխուղեղի ֆիզիոլոգիապես ակտիվ միացություններից մեկի՝ գամմա-ամինոկարագաթթվի եւ դրա ածանցյալների կենսաֆիզիկական դերի, ինչպես նաեւ նյութերի փոխանակության նյարդահումորալ կարգավորման պարզաբանման ուղղությամբ:

Կարեւոր հետաքրքրություն է ներկայացնում կենտրոնական նյարդային համակարգի ֆիզ ուսումնասիրված այնպիսի բաղադրամասերի հետազոտությունը, ինչպիսիք են կենսաբանական ակտիվ պեպտիդները, մեսաղ պարունակող սպիտակուցները եւ պրոտեոլիպիդները:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանը կարեւոր ներդրում ունի մեր հանրապետությունում երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում եւ հիրավի հանդիսանում է հայկական կենսաֆիզիկական դպրոցի հիմնադիրն ու ղեկավարը: Նրա ղեկավարությամբ ավելի քան 60 գիտական աշխատողներ պաշտպանել են թեկնածուական ու դոկտորական թեզեր: Նրա գրչին են պատկանում ավելի քան 250 գիտական աշխատանք ու մենագրություն: Նա կենսաֆիզիկայի ինստիտուտի կողմից լույս ընծայվող «Ուղեղի կենսաֆիզիկայի հարցեր» գիտական ժողովածուների խմբագիրն էր: Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի եւ ՀՀ ԳԱԱ «Նեյրոֆիզիկա» հանդեսի ստեղծումը ակադեմիկոս Հ. Բունիաթյանի եւ նրա կողմից ղեկավարած կենսաֆիզիկոսների ծառայության ակնհայտ գնահատումն էր, որոնք նշանակալի ներդրում ունեն նյարդաֆիզիկայի մի շարք կարեւոր ուղղությունների զարգացման ասպարեզում:

Բեղմնավոր էր նաեւ ակադեմիկոս Հ. Բունիաթյանի հասարակական գործունեությունը: Երկար տարիներ նա ղեկավարել է հանրապետության ֆիզիոլոգների, կենսաֆիզիկոսների եւ դեղաբանների, այնուհետեւ կենսաֆիզիկոսների ընկերությունները: Նա ակտիվորեն մասնակցել է միջազգային կենսաֆիզիկական մի շարք կոնգրեսների ու գիտաժողովների աշխատանքներին: Ակադեմիկոս Հ. Բունիաթյանը գիտության նշանավոր կազմակերպիչ էր: Նա աչքի էր ընկնում գիտության տարբեր բնագավառներին եւ մշակույթին վերաբերող հանրագիտարանային գիտելիքներով, հսկայական աշխատասիրությամբ, որոնք ներդաշնակորեն զուգակցվում էին սկզբունքայնությամբ եւ պահանջկոտությամբ իրեն եւ իր աշակերտների նկատմամբ, զգայուն ու հոգատար վերաբերմունքով դեպի գիտական աշխատողները եւ հատկապես երիտասարդները:

Հ. Բունիաթյանը ոչ միայն խոշոր գիտնական էր, այլեւ հիանալի մանկավարժ: Կենսաֆիզիկայի վերաբերյալ նրա դասախոսությունները Երեւանի պետական համալսարանի, բժշկական եւ անատոմաբուծական-անատոմաբուժական ինստիտուտների ուսանողների համար միշտ աչքի էին ընկնում իրենց կուռ շարադրանքով, գիտական տրամաբանությամբ, հետաքրքրականությամբ եւ խորությամբ: Մեր հանրապետությունում աշխատող շատ պրոֆեսորներ, գիտության դոկտորներ եւ թեկնածուներ, տարբեր լաբորատորիաների ու գիտական հիմնարկությունների ղեկավարներ Հ. Բունիաթյանի աշակերտներն են:

Գավառում՝ իր ծննդավայրում հիմնադրվել է Հ. Բունիաթյանի անվան թանգարան-պատկերասրահ, որտեղ ցուցադրվում են նրա աշխատանքները, անձնական իրեր, բազմաթիվ լուսանկարներ եւ հայտնի նկարիչների կտավներ, որոնք մտել էին նկարների նրա անձնական հավաքածու: Գավառի պետական համալսարանում ստեղծվել է կենսաֆիզիկայի լաբորատորիա, որը կրում է մեր մեծ հայրենակցի անունը:

Սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ եւ կենսաֆիզիկայի ինստիտուտի նախաձեռնությամբ տեղի կունենա «Նեյրոֆիզիկայի եւ նեյրոհումանիտարիայի արդի հիմնահարցերը» թեմայով միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Հ. Բունիաթյանի ծննդյան 100-ամյակին: Գիտաժողովի կազմակերպմանը ակտիվորեն մասնակցում է նաեւ Գավառի պետական համալսարանը՝ գիտաժողովի երկրորդ նիստը տեղի կունենա այդ համալսարանում:

Պրոֆեսոր ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ,
ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի եւ ԳԳՀ կենսաբանության եւ էկոլոգիայի ամբիոնի վարիչ

Իսրայելը գաղտնի ուղերձով Գոլանը Սիրիային վերադարձնելու պատրաստակամություն է հայտնում

Իսկ դա Դամասկոսում ընդամենը կասկածանքներ է առաջացնում

Հունիսի 8-ին «Եդիոս ահրոնոս» թերթը, որպես առաջնորդող լուր, ընթերցողի ուշադրությանն էր ներկայացրել Իսրայելի վարչապետ Եհուդ Օլմերտի գաղտնի ուղերձը՝ հասցեագրված Սիրիայի նախագահ Բաշար Ասադին: Միջազգային լայն արձագանքի արժանացած այս ուղերձում, ըստ իսրայելական թերթի, Օլմերտն առաջարկել է լիովին հեռանալ Գոլանի բարձունքներից, եթե Սիրիան համաձայնի ստորագրել հաշտության համապարփակ պայմանագիր: Իսրայելի վարչապետը Գոլանն ազատելու համար Սիրիայից պահանջել է դադարեցնել համագործակցությունն ինչպես Իրանի, այնպես էլ պաղեստինյան «Համասի» եւ լիբանանյան «Հզբոլլահի» հետ:

Ի դեպ, Իսրայելի հյուսիսում ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Գոլանի բարձունքն իսրայելական բանակը գրավել էր դեռեւս 40 տարի առաջ՝ 1967 թ. 6-օրյա պատերազմի ընթացքում: Բարձունքների վերադարձը Սիրիան համարում է իսրայելական կողմի հետ բանակցությունների վերսկսման գլխավոր նախապայմանը:

Համենայն դեպս, «Եդիոս ահրոնոսի» վկայությամբ, Սիրիայի հետ բանակցելու որոշման մասին Օլմերտը շուրջ 1 ամիս առաջ հեռախոսով իրազեկել է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին եւ ստացել վերջինի հավանությունը: Դրան հետեւել են իսրայելա-սիրիական գաղտնի բանակցությունները, ընդ որում թուրք եւ գերմանացի դիվանագետների միջնորդությամբ, որոնք հանգեցրել են գաղտնի ուղերձի հասցեագրմանը նախագահ Ասադին:

Իսրայելական զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ, պաշտպանության նախարար Շաուլ Մոֆազն առանց մանրամասնելու հաստատել է Սիրիայի նախագահին ուղերձ հղելու մասին «Եդիոս ահրոնոսի» տեղեկությունը: Թեեւ ուղերձի առնչությամբ Դամասկոսն առայժմ պաշտոնական հայտարարություն չի արել, սակայն անգլերեն հրատարակվող «Սիրիա թայմս» պաշտոնաթերթն ընդգծել է, որ Իսրայելն արաբների հետ հաշտության նպատակներ չի հետապնդում, իսկ իսրայելական կառավարությունը հաշտվելու մասին հակասական ազդանշաններ է հաղորդում, ապա եւ մեկնաբանել. «Սիրիան բոլոր հիմքերն ունի կասկածանքով վերաբերվելու Իսրայելի վարչապետ Եհուդ Օլմերտի հաշտության բանակցությունների վերաբերյալ հայտարարություններին»:

Ակամա հարց է ծագում, թե որո՞նք են այդ հիմքերը: Սիրիական թերթը հարցին չի պատասխանում: Բայց որ անցյալ շաբաթ Շաուլ Մոֆազը հայտարարել էր Իրանի դեմ ԱՄՆ-ի հետ համատեղ միջոցառումներ ձեռնարկելու Իսրայելի պատրաստակամության մասին, որին, Իսրայելի ռադիոյի վկայությամբ, հետեւել են հունիսի 10-ին երկրի հարավում սկսած իսրայելա-ամերիկյան ռազմաօդային ուժերի մեկշաբաթյա համատեղ զորավարժությունները, ակնհայտ է: Դրանք միանգամայն արդարացնում են «Սիրիա թայմսի» վարչապետ Օլմերտի ուղերձից բխող կասկածները:

Հատկապես այն դեպքում, երբ Իսրայելում ընդդիմությունն, ինչպես CNN-Turk-ն է նշել, «Լիկուդի» գլխավորությամբ խաղաղության դիմաց Գոլանը սիրիացիներին զիջելու պատրաստակամության համար խստագույնս դատապարտել է վարչապետ Օլմերտին, նշել, որ վերջինս կորցնելով ժողովրդականությունը երկրում, չունի զիջելու իրավասություն, ապա եւ նախազգուշացրել է Սիրիային. «Թող նախագահ Ասադն իմանա, որ Քնեսեթի ճնշող մեծամասնությունն ու Իսրայելի հասարակությունը մերժում է Գոլանից հրաժարվելու գաղափարը»: Այդ ընթացքում Օլմերտի կոալիցիոն կառավարությանը մաս կազմող կուսակցությունները հայտարարել են. «Եթե Սիրիան իսկապես ձգտում է խաղաղության, ապա Բաշար Ասադը պետք է ժամանի Իսրայել»:

Քանի որ Սիրիայի նախագահի մեկնումն Իսրայել, երբ վերջինի հետ բանակցությունների վերսկսման գլխավոր նախապայման է հանդիսանում Գոլանի բարձունքների վերադարձը, իրատեսական չէ, ուստի վարչապետ Օլմերտի ուղերձը պետք է համարել իրավիճակային մարտավարական քայլ: Ինչ վերաբերում է դրա նպատակներին, ապա դրանց մասին էլ վկայում են ինչպես Իրանի, այնպես էլ «Համասի» եւ «Հզբոլլահի» հետ համագործակցությունը դադարեցնելու մասին Օլմերտի ուղերձով արտահայտած նախապայմանը:

Ակնհայտ է, որ Սիրիան չի համաձայնի նաեւ այս նախապայմանին: Սա նշանակում է, որ Օլմերտի ուղերձով Իսրայելը փորձում է Սիրիայի հետ համագործակցությունից զրկելու միջոցով ուժեղացնել ճնշումը Իրանի վրա եւ ազդարարում «Համասին» ու «Հզբոլլահին» մեկուսացնելու իր վճռականության մասին, միաժամանակ դրական ազդանշան է հաղորդում միջազգային հանրությանը, որպեսզի բարելավի «անհաշտ» վարկանիշը եւ սիրում է Դամասկոսին հայտնվել խաղաղության առաջարկը մերժողի դերում:

Չմոռանանք, որ հունիսի 6-ին եվրամիությունն արտահայտվել էր Պաղեստինի անկախ եւ ինքնիշխան պետության հռչակման օգտին, ընդգծելով տարածաշրջանային խաղաղությունն արմատական փոփոխության ենթարկելու անհրաժեշտությունը, իսկ եվրախորհրդարանն արաբա-իսրայելական 6-օրյա պատերազմի 40-ամյակին նվիրված նիստում, դատապարտելով Իսրայելի 40-ամյա օկուպացիան Պաղեստինում, միաժամանակ պահանջել էր անհապաղ ազատել իսրայելական բանտերում կալանված 45 պաղեստինցի պատգամավորների:

ՀԱՍԿՈՒ ՉԱԲԵՅԵՆ

«ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ
ԾԱՆՈՒՑԱԳԻՐ
ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺՆԵՏԻՐ
Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2007 թ. հունիսի 29-ին ժամը 17:00
«ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ-ում, /. Երեւան, Գասպարյանի 2 փող. 9 շենքի հասցեով,
տեղի կունենա «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՕՐԱԿԱՐԳ
1. Հաստատել հանձնաժողովի խանգարական կազմի եւ լիազորությունների ժամկետի սահմանում.
2. Հաստատել հանձնաժողովի անդամների ընտրություն.
3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով առտիճ իրականացնող անձի հաստատում.
4. Ընկերության 2006 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եւ ընկերության առտիճ իրականացնող անձի եզրակացությունների հաստատում.
5. Ընկերության 2006 թ. տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների եւ վնասների հաշվի, շահույթների եւ վնասների բաշխման հաստատում.
6. Ընկերության 2006թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների չափի հաստատում եւ վճարման մասին որոշման ընդունում.
7. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն.
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման անսպառիչը մասնակցելու է՝ 2007 թ. հունիսի 5-ը:
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցողների գրանցումը սկսվում է 2007 թ. հունիսի 29-ին՝ ժամը 16:30-ին:
Բաժնետերը բաժնետերերի ընդհանուր ժողովում ներկայացող հարցերին վերաբերող տեղեկություններին եւ նյութերին կարող են ծանոթանալ դիմելով, 2007 թ. հունիսի 11-ից յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 11:00 մինչեւ 13:30, «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ, /. Երեւան, Գասպարյանի 2 փող. 9 շենք հասցեով: Տրամադրվող տեղեկությունների եւ նյութերի ցանկը հետեւյալն է՝
1. «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ 2006 թ. տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռները:
2. «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ վերստուգող հանձնաժողովի 2006 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների եզրակացությունը:
3. «Սարոս-առտիս» ՍՊԸ-ի կողմից տրված «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ 2006 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների եզրակացությունը:
4. 2007 թ-ի հունիսի 29-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին առաջարկվող տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների ցուցակ:
5. «ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ 2007 թ. մայիսի 24-ին կայացած խորհրդի նիստի արձանագրությունը:
Խնդրում ենք Ձեզ ներկա լինել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին
«ԼՅՈՒՔՍ» ԲԲԸ տնօրենների խորհուրդ
«ԼՅՈՒՔՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
/. Երեւան, Գասպարյանի 2 փող. 9 շենք «29» հունիսի 2007 թ.
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
ՔՎԵՍԹԵՐԹԻԿ թիվ 1
1. Հաստատել հանձնաժողովի խանգարական կազմի եւ լիազորությունների ժամկետի սահմանում.
Կողմ	Դեմ	Ձեռնպահ
2. Հաստատել հանձնաժողովի անդամների ընտրություն.
N	Անուն Ազգանուն	Քվեարկություն		
1	Ավետիսյան Էդիկա	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
2	Պետրոսյան Ռաֆայել	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
3	Կրաբչյան Գուրգեն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով առտիճ իրականացնող անձի հաստատում.
Կողմ	Դեմ	Ձեռնպահ
4. Ընկերության 2006թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եւ ընկերության առտիճ իրականացնող անձի եզրակացությունների հաստատում.
Կողմ	Դեմ	Ձեռնպահ
5. Ընկերության 2006թ. տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների եւ վնասների հաշվի, շահույթների եւ վնասների բաշխման հաստատում.
Կողմ	Դեմ	Ձեռնպահ
6. Ընկերության 2006թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների չափի հաստատում եւ վճարման մասին որոշման ընդունում.
Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ծանուցում. Քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակներն են՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ»:
Յուրաքանչյուր հարցի քվեարկության ժամանակ հարցը դրված է միայն մեկ ընտրված տարբերակը. մյուս երկուսը՝ չջնջված են: Քվեաթերթիկների միջոցով քվեարկման դեպքում հաշվառվում են ձայներն, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկման միայն մեկ տարբերակը:
Նշված պահանջի խախտմամբ ալյալ բաժնետիրոջ քվեարկող հարցի քվեաթերթիկը համարվում է անվավեր եւ ձայների հաշվառման ժամանակ հաշվի չի առնվում:
Սույն քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (բաժնետիրոջ ներկայացուցչի) կողմից:
Բաժնետիրոջ Ազգանուն Անուն	
Բաժնետիրոջ բաժնետոմսերի հանակը	
Բաժնետիրոջ ստորագրությունը	✓
Քվեարկության տարբերակներ՝
Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Նշանակում է՝ քվեարկող հարցին «կողմ» քվեարկություն
Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Նշանակում է՝ քվեարկող հարցին «դեմ» քվեարկություն
Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Նշանակում է՝ քվեարկող հարցին «ձեռնպահ» քվեարկություն
«ԼՅՈՒՔՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
/. Երեւան, Գասպարյանի 2 փող. 9 շենք «29» հունիսի 2007 թ.
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
ՔՎԵՍԹԵՐԹԻԿ թիվ 2
1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն.
	Անուն Ազգանուն	Ծննդյան տարեթիվը	Մասնագիտությունը, որակավորումը	Զբաղեցրած պաշտոնը	Քվեարկություն
1	Գագիկ Բրսանջյան	1953	ինժեներ, տեխնոլոգ	խորհրդի նախագահ խորհրդի	Առանց հիշատակության
2	Գեղամ Բրսանջյան	1957	ինժեներ, տեխնոլոգ	անդամ, գլխավոր տնօրեն	Առանց հիշատակության
3	Մաքիկոն Բրսանջյան	1975	տնտեսագետ	խորհրդի անդամ	
4	Գիրա Մեհրաբյան	1964	տեխնոլոգ	խորհրդի անդամ, պատասխանատու	
5	Մանյա Տիգրանյան	1942	տնտեսագետ, հաշվապահ	խորհրդի անդամ, գլխ. հաշվապահ	
Ծանուցում. Քվեարկության դրված հարցի վերաբերյալ հիշատակությունը անջնջելի է դարձնում (կոնտրոլաժիկ) մեթոդով, որի էությունը կայանում է հետեւյալում
Հարցի հիշատակման ժամանակ յուրաքանչյուր հիշատակողի բաժնետոմսերի հանակը բազմապատկվում է տնօրենների խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների թեկնածուների հանակով, որը եւ հիշատակողը կարող է բաշխել իր հայեցողությամբ, դատարկ վանդակներում նշելով հանդապատասխան ձայների հանակը
Նշված պահանջի խախտմամբ հիշատակող հարցի դեպքում տարբերությունը համարվում է անվավեր եւ ձայների հաշվառման ժամանակ հաշվի չի առնվում:
Սույն հիշատակումը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (բաժնետիրոջ ներկայացուցչի) կողմից:
Բաժնետիրոջ Ազգանուն Անուն	
Բաժնետիրոջ բաժնետոմսերի հանակը	
Բաժնետիրոջ գումարային ձայների հանակը	
Բաժնետիրոջ ստորագրությունը	✓

ՈՒԹԵՐՈՐԴ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Բուշի եվրոպական շրջագայությունն ավարտվում է Բուլղարիայում

Տիրանայում նա պահանջեց Կոսովոյի անկախացում

Իր եվրոպական շրջագայության ընթացքում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը հունիսի 6-ին Պրահայում էր, ապա Գերմանիայում մասնակցեց «Մեծ ութնյակի» գագաթաժողովին, մեկնեց Լեհաստան, Իտալիա, Ալբանիա, իսկ երեք ժամ անց Սոֆիա, շրջագայությունն ավարտելով Բուլղարիայում:



BBC-ի տվյալների համաձայն, Սոֆիայում բանակցությունների գլխավոր թեմաներն են եղել Կոսովոյի անկախության եւ Եվրոպայում հակահրթռային պաշտպանության ամերիկյան համակարգի տեղաբաշխման հարցերը: Երկու հարցերն էլ ԱՄՆ-Ռուսական հարաբերություններում լարվածության աճի պատճառ են դարձել:

Դեռի արեւելք տեղաշարժվելու ամերիկյան ծրագրի շրջանակներում սեպտեմբերին Բուլղարիայում կտեղաբաշխվեն 3000-ից ավելի ամերիկացի զինծառայողներ: Նախկին սոցիալիստական երկիր Բուլղարիան ՆԱՏՕ-ին անդամակցեց 2004 թ., իսկ 2007 թ. դարձավ ԵՄ անդամ:

Եթե եվրոպական մյուս երկրներում Բուշի այցելություններն ուղեկցվել էին հակաամերիկյան ցույցերով, ապա Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում կիրակի օրը նրան ընդունել էին իբրեւ հերոսի: Ալբանիան ԱՄՆ-ի հետեւողական դաշնակիցն է նրա «հակաահաբեկչական պատերազմում»: Բայց առաջնային պատճառը ալբանացիների համակրանքի՝ Կոսովոն է:

Ալբանիայի մայրաքաղաքում Բուշը կոչ արեց վերջ դնել Կոսովոյի անկախությանը վերաբերող երկխոսություններին եւ այժմ արդեն անկախություն շնորհել Սերբիայի այդ երկրամասին: Նրա կարծիքով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին պետք է վերջնաժամկետի տրվի Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ բանաձեւ ընդունելու համար:

«Մեծ ութնյակի» գագաթաժողովում Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին առաջարկել էր կես տարով հետաձգել Կոսովոյի հարցի լուծումը, հարուցելով Բուշի զայրույթը: Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ անկախացման բանաձեւի նախագիծը մայիսի վերջերին ՄԱԿ-ի ԱԽ-ին է ներկայացրել ՄԱԿ-ի հատուկ պատվիրակ Մարտի Ահտիսաարին:

Սերբիան եւ Ռուսաստանը դեմ են նախագծին: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը բանիցս հայտարարել է, որ Կոսովոյի անկախացման դեպքում ՄԱԿ-ը ստիպված կլինի ճանաչել նաեւ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը:

Ֆրանսիայի խորհրդարանում կգերիշխեն Սարկոզիի կողմնակիցները

Վերջնական արդյունքների համաձայն, Ֆրանսիայում կիրակի օրն անցկացված խորհրդարանական ընտրություններում համոզիչ առավելության են հասել նախագահ Նիկոլա Սարկոզիի «Ժողովրդական շարժման միություն» կուսակցության թեկնածուները, ստանալով բոլոր քվեների 39,54 տոկոսը:

Սոցիալիստ թեկնածուներն ստացել են 24,73 տոկոս, Ֆրանսուա Բայրուի հիմնած կենտրոնամետ «ՄՈԴԵՄ» կառավարությունը՝ 7,61 տոկոս, ծայրահեղ ձախ «Ազգային ճակատը» եւ Կոմկուսը՝ 4,29-ական տոկոս:

«Ազգային ճակատի» առաջնորդ Ժան-Մարի Լը Պենի վարկանիշն ընկել է մասնավորապես այն պատճառով, որ օրերս նա դրվատանքով էր արտահայտվել 2-րդ աշխարհամարտի ժամանակ Ֆրանսիայի նացիստական օկուպացման մասին:

Ֆրանսպրեսը նշում է, որ Ազգային ժողովի 577 տեղերն զբաղեցնելու նպատակով ընտրություններին մասնակցել են 80 քաղաքական կուսակցություններ եւ դաշինքներ: Քվեարկությանը մասնակցել է ընտրողների մոտ 60 տոկոսը:

Ընտրությունների առաջին փուլում հայտնի դարձան 577 պատգամավորներից 105-ի անունները (մեծ մասը՝ Սարկոզիի կողմնակիցներ): Երկրորդ փուլը տեղի կունենա հունիսի 17-ին: Ենթադրվում է, որ Սարկոզիի կողմնակիցներն Ազգային ժողովում կունենան 383-500 տեղ: «Ֆիգարո» թերթի կանխատեսումների համաձայն, «Ժողովրդական շարժման միությունը» եւ դաշնակից ուժերը ԱԺ-ում կունենան 405-445 տեղ, սոցիալիստները՝ 100-140 տեղ:

Խորհրդարանական ընտրություններում որեւէ խմբակցության այսքիսի բացահայտ հաղթանակն աննախադեպ երեւույթ է Ֆրանսիայի 5-րդ հանրապետության պատմության մեջ: Կառավարող ուժերի ճամբարում առաջին փուլի արդյունքները համարում են Սարկոզիի քաղաքականությանը տրված վստահության քվե:

Պ. Ք.

USAID
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՊԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության հարկային պետական ծառայության վարչարարական կարողությունների գնահատման ծառայության մատուցման մրցույթ
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Հայաստանի հարկային կատարելագործման ծրագիրը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության հարկային պետական ծառայության վարչարարական կարողությունների գնահատման ծառայություն մատուցող կազմակերպության ընտրության նպատակով:
Հայտերի ներկայացման իրավերը ստանալու համար, հետաքրքրված կազմակերպությունները կարող են դիմել՝
Արամ Մուրադյանին, Հարկային վարչարարության փորձագետ
Հայաստանի հարկային կատարելագործման ծրագիր
ՀՀ, Երեւան, 0015, խորենացի փ. 7, սենյակ 412
Հեռ. +374 (10) 53 86 25, 58 36 47, էլ. փոստ՝ contact@bah.am
Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝
2007թ. հունիսի 21-ը, ուրբաթ, ժամը 14:00:
Մրցույթին մասնակցելու ներկայացվող պահանջները կարող եք բեռնել www.atp.am կայքից:

Երաժշտական թիվ 21 դպրոցը՝ Անահիտ Ցիցիկյանի անունով

Աջափնյակի թիվ 21 երաժշտական դպրոցը գործում է 1997 թվականից: Օրեր առաջ կրթարանը նշեց հիմնադրման 20 տարին, հոբելյանը նշանավորվեց դպրոցի անվանակոչմամբ, այստեղ այն կրելու է հայ դասական երաժշտարվեստի երախտավոր, տաղանդավոր ջութակահար, մանկավարժ Անահիտ Ցիցիկյանի անունը: Այդ օրը դպրոցական կենսագրության մասյանում հիշարժան էջ գրվեց:

Դպրոցը, սակայն, խիստ անմխիթար պայմաններում է, երաժշտական արվեստի, էսթետիկայի օջախ լինելուց իր անբարեկարգ, բարձիթողի վիճակի պատճառով շատ է հեռու: Հոբելյան էր նշվում դպրոցում, բայց կառույցը մռայլ ու խեղճ տեսքով, հենց մուտքից հուսահատություն առաջացրեց: Տարիներ շարունակ վերանորոգչական աշխատանքների բացակայությունն աչք է ծակում, հնամաշ, ներկաթափ դռները, լուսամուտները, հատակը, աթոռները, առաջին հարկի խորդանոցի վերածված սենյակները, լվված, հեռավոր գյուղերի՝ սովետական դրոշմով մշակույթի ակումբ կամ նման մի բան էին հիշեցնում: Երկրորդ հարկի սենյակներից երաժշտական գործիքների մեթընդմեթ լսվող մեղեդին հիշեցնել էր տալիս, որ հաստատությունը գործում է, եւ որ այնտեղ սովորում են աշակերտներ, որոնց մեջ հավանաբար կան նաեւ շնորհալիներ, այսպիսի պայմաններում նվազագույն աշխատավարձով աշխատում են ուսուցիչներ, նվիրվում իրենց գործին՝ ինչ-որ տեղ համակերպված իրականությանը:

Ընդարձակ նախասրահում Անահիտ Ցիցիկյանի կյանքի ու ստեղծագործական աշխարհի մթնոլորտ փորձել էին ստեղծել պատերին փակցված պլակատները, ազդագրերը, ջութակահարի լուսանկարները: Խոստովանեմ, որ նման պայմաններում շատ զարմացած էի՝ դպրոցի դահլիճում Էդվարդ Միրզոյանին տեսնելով: Ջութակահարուհու անձի ու նրա արվեստի հանդեպ խորագույն հարգանքն էր ծերունազարդ կոմպոզիտորին բերել այստեղ: Եվ ինչպես ելույթներից հետո դպրոցական հաշվետու համերգն սկսելուց առաջ, հենց ինքը խոսք խնդրեց. «Երբ ներս մտա, ձեր կիսաս պռաս ծափերից բան չհասկացա, բայց երբ ձեզ նայեցի, տեսա, որ ծանաչում եք ինձ: Անահիտ Ցիցիկյանը մեր արվեստում դեմք էր, բարձր դեմք: Նա միայն ջութակահար չէր, այլեւ մշակութային գործիչ: Կար թեռհավատություն երաժշտական արխիոլոգիա գիտության հանդեպ: Սակայն ինքը պրոտեց, խորապես ուսումնասիրեց այդ ասպարեզը եւ հիմնադրեց երաժշտագիտության այդ ճյուղը Հայաստանում»:

Անահիտ Ցիցիկյանը ծնվել է 1926 թ.-ին Լենինգրադի բարձրախավ, արիստոկրատ, ուսյալ ընտանիքում, մեծացել մտավորական ընտիր միջավայրում: Սովորել է Երեւանի կոնսերվատորիայում, ապա ուսումը շարունակել Մոսկվայում եւ Լենինգրադում: Դեռ վաղ շրջանից համագործակցել է ժամանակի նշանավոր երաժիշտների՝ Ռոստրոպովիչի, Օյստրախի, Կոգանի, Մախիմ Շոստակովիչի եւ այլոց հետ:

Սովետական տարիներին նա առաջին եւ թերեւս միակ կին ջութակահարուհին էր, որ դուրս է եկել միջազգային բեմ, հարյուրավոր համերգային շրջագայություններ է ունեցել աշխարհի նշանավոր քաղաքներում: Հայ կատարողական արվեստի փառքերից մեկն էր Անահիտ Ցիցիկյանը, սակայն դրանից բացի արվեստի լուրջ հետազոտող-ուսումնասիրող էր ու մանկավարժ: Երեւանի կոնսերվատորիայի բազմամյա պրոֆեսորը մի քանի սերունդներ է դաստիարակել, նորամուծություններ մտցրել ուսումնական ծրագրերում: Նա մոռացության մատնված տաղանդավոր մարդկանց հայտնաբերելու վարպետ ձիրքով էր օժտված եւ հայ երաժշտարվեստին է վերադարձրել կորսված շատ անուններ. այդ թվում նաեւ Բարսեղ Կանաչյանին: Նշանակալի ներդրում է ունեցել երաժշտագիտության ասպարեզում: Երկարատեւ գիտական պրոցումների արդյունքի էր 1977 թ. լույս տեսած «Հայկական աղեղնային արվեստ» ուսումնասիրությունը, որը հետագայում լրամշակման ենթարկեց դուստրը՝ Նունե Շամախյանը. այն լույս տեսավ 2004 թ.-ին՝ ռուսերեն:

Անահիտ Ցիցիկյանը Հայաստանում երաժշտագիտության մեջ մի նոր՝ երաժշտական հնէագիտություն ճյուղի հիմնադիրը եղավ: Իր մահից հետո (1999 թ.) դուստրը հոգածու ուշադրությամբ ու գորովանքով է վերաբերում մայրիկի արխիվին (ուսումնասիրություններ, հոդվածներ, լուսանկարներ, նամակներ) եւ ուրույն շարունակություն հաղորդում նրա գործին: Ստեղծել է «Անահիտ Ցիցիկյան» հիմնադրամը, անցյալ տարի ջութակահարուհու 80-ամյակի առիթով իր նախաձեռնությամբ մամուլում եղան հրապարակումներ («Ազգ», 27 մայիս, 2 սեպտեմբերի 2006թ.), նկարահանվեց տեսաֆիլմ: Հոբելյանի առիթով մշակույթի նախարարությունը անցյալ դեկտեմբերին Երեւանի երաժշտական դպրոցներից մեկը Անահիտ Ցիցիկյանի անունով կոչելու առաջարկ արեց: Այդ օրվանից դուստրը՝ Նունեն սանձնեց թիվ 21 դպրոցի հովանավորությունը, հնարավորության սահմաններում աջակցելով կրթարանին տրամադրել է երաժշտական գործիքներ, գրականություն, նոտաներ, համակարգիչ, տպիչ սարք: Դպրոցը չուներ անգամ երգչախումբ՝ պետության կողմից ֆինանսներ չհատկացնելու պատճառով: Նունե Շամախյանի հովանավորությամբ ստեղծվեց եւ կազմավորվեց դպրոցի երգչախումբը եւ նշանակվեց գեղարվեստական ղեկավար: Անվանակոչման օրն իր ելույթում նա համառոտ ներկայացրեց Անահիտ Ցիցիկյանին, հնչեց Կոմիտասի ստեղծագործություններից ցիցիկյանական զգայուն մի մեկնաբանություն: Նունեն դպրոցին նվիրեց DVD նվագարկիչ:

Շնորհավորական ողերձներով ելույթներ ունեցան Բարսեղ Կանաչյանի անվան երաժշտական դպրոցի տնօրենը, թաղամասային մշակույթի եւ կրթության բաժնի վարիչը, Ազգային գրադարանից, թաղամասային մշակույթի վարչությունից Զինաիդա Բարսեղյանը, որը շնորհավորագրերով պարգեւատրեց դպրոցի տնօրեն Շուշան Հովհաննիսյանին եւ մի քանի աշխատակիցների:

Օրվա մյուս զարմանալի հանգամանքը հոբելյանական միջոցառմանը դահլիճում աշակերտների գրեթե բացակայությունն էր:

Թերեւս երաժշտական դպրոցի հոբելյանն ու անվանակոչությունը քաղաքային իշխանություններին առիթ տա ուշադրություն դարձնելու կրթարանի ցավալի վիճակին՝ դպրոցին արվեստի օջախի տեսք հաղորդելու համար:

ՄԵԼԻՆԵ ՌԱՖԱԵԼՅԱՆ

Պարույր Սեւակի սպանությունը ափի մեջ

Վերջերս՝ հունիսի 8-ին «Ազգ» թերթի խմբագրության անունով մի նամակ ստացվեց Բեյրութում հրատարակվող «Ազդակ» օրաթերթի խմբագրական կազմի անդամ, գրողհրապարակախոս Շահանդուխտից: Նամակը վերաբերում է Արմեն եւ Միմի Հարությունյանների մեկենասությամբ լույս տեսած մեր «Պարույր Սեւակ. Ձուլ Սովետական Սպանություն» գրքին: Նամակում մասնավորաբար ասված է.

«... Ցիաւաստալու պատճառ մը չունիմ Սերգէյ Գալոյեանի փաստարկումներուն. արդեօք ժխտողներ պիտի գտնուին: Այդ պարագային Ս. Գալոյեան պիտի կարենայ ինքզինք պաշտպանել: Հայաստանի անկախացումէն 15 տարիետ ալ պիտի գտնուին Պարույր Սեւակը չիաւնողներ, ննդասողներ, կամ սովետական աւսօվքարը սարքած, այդ ոճիր-օպերացիան գործադրող ոճրագործները արդարացնողներ:

Երկրորդ, բազմաթիւ անուններ կան Պարույրին դէմ կամ թեր: Որքան

լաւ պիտի ըլլար անոնց անուններուն հովը նշել փակագիծի մէջ անոնց մահացած ըլլալը: Ամէն պարագայի կը շնորհաւորեմ յանդգնութիւնը, քաջութիւնը Սերգէյ Գալոյեանի...»:

Ու քանի հարգարժան Շահանդուխտը ցանկացել էր, որպեսզի իրեն պատասխաներ գրքի հեղինակը, ուստի ասենք.

Նախ՝ շնորհակալություն տոյժ խոսքերի համար, որոնք այնքան թանկ են ամեն մի ուսումնասիրողի համար: Երկրորդ. Ձեր կասկածները փարատելու համար ասենք, որ այժմ արդեն ավարտին է մոտենում այս գրքի ամբողջական տարբերակը՝ Ա հատորի տպագրությունը, որն իրականացվում է իմ լավ բարեկամ Միհա Գալանքարյանի հովանավորությամբ: Տպագրության է պատրաստ նաեւ գրքի Բ հատորը, որի համար հովանավորի կարիք է զգացվում: «Պարույր Սեւակ. Ձուլ սովետական սպանություն» գիրքն ամբողջությամբ պատասխան կտա ձեր բոլոր հարցումներին եւ կցրի բոլոր կասկածները, քանզի ներկայացված են փաստեր եւ վավերագրեր: Դրանց իսկությունը ժխտել ոչ ոք չի կարող:

Ուրեմն, սպասենք ամբողջական գիրքը լույս տեսնելուն:

Հարգանքներով՝

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Ուղղում

Մեր օրաթերթի հունիսի 7-ի եւ 8-ի համարներում Եվրոպական բանկի հայտարարություններում Եվրոպական բանկից անկախ պատճառներով տեղ են գտել վրիպակներ: Տպագրում ենք ուղղված տարբերակները:

Business Support Council in Armenia
Economic/Financial Consultants
Notification of EBRD Consultancy Assignment

Closing Date: June 27, 2007

The European Bank for Reconstruction and Development («EBRD» or the «Bank») wishes to contribute to the improvement of the investment climate in Armenia and, working together with the Armenian Development Agency («ADA»), will support the Business Support Council (the «Council») to maintain policy dialogue at a high level between the government, business community and donors. To carry this out, a support team headed by the Senior Consultant is being established and now requires two Economic/Financial Consultants (the «assignments»).

The assignments are expected to start around July 2007 and last for 2 years. These are full-time roles and the Consultants are expected to be resident in the country for the duration of their contracts.

The two successful individuals to be selected as Economic/Financial Consultants should have at least 5 years of analytical work experience in the field of economics and/or finance at the highest possible levels preferably both in the public and private sectors and should be able to demonstrate the following:

- University degree in economics/finance, postgraduate degree is desirable.
- Excellent written and oral communication skills in Armenian and English are obligatory, in Russian - desirable.
- Strong analytical background in the economics/finance field.
- Strong interpersonal skills.

For full details and submission requirements, please refer to the notification in English on the EBRD's website at ***www.ebrd.com/oppor/procure/opps/consult/index.htm*** or contact Angela Levitsky by email at ***levitska@ebrd.com.***

Business Support Council in Armenia
Legal Consultant
Notification of EBRD Consultancy Assignment

Closing Date: June 27, 2007

The European Bank for Reconstruction and Development («EBRD» or the «Bank») wishes to contribute to the improvement of the investment climate in Armenia and, working together with the Armenian Development Agency («ADA»), will support the Business Support Council (the «Council») to maintain policy dialogue at a high level between the government, business community and donors. To carry this out, a support team headed by the Senior Consultant is being established and now requires a Legal Consultant (the «assignment»).

The assignment is expected to start around July 2007 and last for 2 years. This is a full-time role and the Consultant is expected to be resident in the country for the duration of the contract.

The successful candidate should have at least 5 years of analytical work experience in the legal field at the highest possible levels preferably both in the public and private sectors and should be able to demonstrate the following:

- University degree in law, postgraduate degree is desirable.
- Excellent written and oral communication skills in Armenian and English are obligatory, in Russian - desirable.
- Strong analytical background in the legal field.
- Strong interpersonal skills.

For full details and submission requirements, please refer to the notification in English on the EBRD's website at ***www.ebrd.com/oppor/procure/opps/consult/index.htm*** or contact Angela Levitsky by email at ***levitska@ebrd.com.***

Կորել է
«Ռ.Ա.Ա.Յ-Ս.Թ.Ա.Ն» ՍՊԸ-ի կլոր կնիքը, ՀՎՀՀ 01228787:
Համարել անվավեր:

Հաղթանակներն առաջատարներին տարբեր կերպ տվեցին

Երկաբաթյա ընդմիջումից հետո մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 2-րդ շրջանը: Խաղացանկի ֆմահաճույքով առաջատար քառյակը մրցեց աղյուսակի մյուս հորիզոնականներում տեղ զբաղեցնող թիմերի հետ: Առաջատարները հերթական հաղթանակներ տոնելով՝ էլ ավելի մեծացրին միավորների տարբերությունն իրենց հետապնդողներից: Սակայն այդ հաղթանակները նրանց տարբեր կերպ տվեցին:

Առդյունավետ խաղով աչքի ընկավ «Բանանցը», որը հյուրընկալել էր «Շիրակին»: Թեեւ արդեն 24-րդ րոպեին դաշտից հեռացվել էր «Բանանցի» պաշտպան Անդրեյ Չերեւկոն, սակայն 10 հոգով էլ նախորդ առաջնության արծաթե մրցանակակիրը վստահ հաղթանակ տարավ: Երկու անգամ մրցակցի դարպասը գրավեց Արսեն Բալաբեկյանը, մեկ գնդակ էլ խփեց Արամ Բարեղամյանը: Իսկ ահա «Շիրակը» խաղավերջում նույնիսկ 11 մ հարվածը չիրացրեց: Բարիկյանի հարվածը հետ մղեց Ռադաջան:

Եթե «Բանանցը» վստահ հաղթանակ տոնեց, ապա մյուս առաջատարներին հաջողությունը դժվարությամբ տրվեց: «Արարատը» հյուրընկալել էր Կապանի «Գանձասարին», որին առաջնության մեկնարկում զիջել էր 0-1 հաշվով, ուստի ձգտում էր ռեւանշի: Արարատցիները շատ ջանքեր ներդրեցին արդյունքի հասնելու համար, գոլային մի քանի իրական պահեր ստեղծեցին, բայց միայն մեկ անգամ կարողացան գրավել մրցակցի դարպասը: Կրկին աչքի ընկավ բրազիլացի Մարկոսը՝ հստակ իրացնելով 11 մ հարվածը, որը նշանակվել էր ձեռքով խաղի համար: «Գանձասարն» էլ երկու գոլային պահ ստեղծեց, բայց Էդգար Սաֆարյանը չկարողացավ դիպուկ հարվածել:

«Միկան» էլ մեկ գնդակի առավելությամբ հաղթեց «Կիլիկիային»: Վերջինիս ղեկը ստանձնել է Ռաֆայել Գալստյանը, որը մինչ այդ մարզում էր «Միկա-2-ը»: Նա «Կիլիկիայում» փոխարինել է Սերգեյ Աղաբաբյանին: Սա բարձրագույն խմբում ընթացիկ մրցաշրջանում արդեն գլխավոր մարզչի 5-րդ փոփոխությունն է: Մինչ այդ պաշտոնանկություն էր գրանցվել «Ուլիսում», «Գանձասարում», «Փյունիկում» եւ «Միկայում»: Փաստորեն, մասնակից ութ թիմերից միայն «Արարատի», «Բանանցի» եւ «Շիրակի» գլխավոր մարզիչներն են մրցաշրջանի սկզբից շարունակում իրենց աշխատանքը հարազատ կոլեկտիվում: «Կիլիկիայի» հետ հանդիպումը «Միկայի» գլխավոր մարզչի պաշտոնում առաջնության անդրանիկ խաղն էր Արկադի Անդրեասյանի համար: Նորամուտը հաջող սացվեց: «Միկան» հաղթեց 2-1 հաշվով: Բոլոր գոլերն էլ խփվեցին առաջին խաղակեսում: Նախ 22-րդ րոպեին Արմեն Պետիկյանը տուգանային հարվածով բացեց հաշիվը: 12 րոպե անց կիլիկիացի էդգար Թորոսյանը վերականգնեց հավասարակշռությունը, սակայն ֆիչ անց Արսյոմ Ադամյանը խփեց հաղթական գնդակը:

Բավական անսպասելի էր «Ուլիս»- «Փյունիկ» հանդիպման սկիզբը: Արդեն 6-րդ րոպեին «Ուլիսի» լեգեոնական Ոտազովը բացեց հաշիվը: Բավական ժամանակ պահանջվեց «Փյունիկից» հաշիվը հավասարեցնելու համար: Աչքի ընկավ Գետրգ Ղազարյանը: «Ուլիսը» բավական հմտորեն էր կազմակերպել պաշտպանությունը եւ «Փյունիկին» չէր հաջողվում սպառնալից պահեր ստեղծել մրցակցի դարպասին: Եվ այստեղ իր թիմին օգնության եկավ բազմափորձ Սարգիս Հովսեփյանը, որը 80-րդ րոպեին հիանալի իրացրեց տուգանային հարվածը՝ հաղթանակ պարգեւելով չեմպիոնին:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	8	6	1	1	17-4	19
2. Բանանց	8	5	2	1	12-3	17
3. Արարատ	8	5	1	2	11-2	16
4. Միկա	8	5	1	2	18-9	16
5. Գանձասար	8	2	2	4	5-6	8
6. Շիրակ	8	2	2	4	5-9	8
7. Կիլիկիա	8	1	1	6	3-19	4
8. Ուլիս	8	1	0	7	3-22	3

Ռմբարկուները

Մարկոս	«Արարատ»	7
Կլեբեր	«Միկա»	4
Գետրգ Ղազարյան	«Փյունիկ»	4

Հաղթանակի համար Արոնյանին անհրաժեշտ է եւս կես միավոր

Էլիսայում ընթացող շախմատի աշխարհի առաջնության հավակնորդների մրցախաղի 4-րդ պարտիան Լեւոն Արոնյանի եւ Ալեխեյ Շիրովի միջեւ ավարտվեց ոչ-ոքի: Նույնպիսի ավարտ ունեցավ նաեւ նրանց միջեւ կայացած 5-րդ պարտիան, որում սպիտակ խաղաքարերով խաղում էր Արոնյանը: Մրցակիցները հաշտություն կնքեցին 34-րդ քայլում: Այսպիսով, մրցախաղի ավարտից մեկ տուր առաջ Արոնյանը ընթանում է առջեւից 3-2 հաշվով: Մրցախաղում ընդհանուր հաղթանակ տոնելու համար Արոնյանին բավական է այսօր կայանալիք վերջին՝ 6-րդ պարտիայում եւս կես միավոր վաստակել: Հիշեցնենք, որ Արոնյանը Շիրովին հաղթել էր առաջին պարտիայում, իսկ հաջորդ 4 պարտիաներն ավարտվել էին ոչ-ոքի:

Ոչ-ոքի ավարտ ունեցան նաեւ Լեկո-Բարեեւ, Գելֆանդ-Կամսկի պարտիաները, իսկ Ռուբլյովսկին հաղթեց Գրիշչուկին: Լեկոն 3-1 հաշվով շահում է մրցախաղը Բարեեւից, Գելֆանդը 2,5-1,5 հաշվով առջեւից է ընթանում Գաստ Կամսկու հետ մրցախաղում, իսկ Գրիշչուկ-Ռուբլյովսկի մրցախաղում հաշիվը հավասար է (2-2):

Կոստն պահպանեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը

Նյու Յորքի հանրահայտ «Մեդիսոն Սկվեր Գարդեն» մարզասրահում կայացած պրոֆեսիոնալ բոնցխմարտի երեկոյի գլխավոր մենամարտը WBA-ի վարկածով կիսամիջին քաշում աշխարհի չեմպիոն պուերտորիկացի Միխել Անխել Կոստոյի մրցավեճն էր ամերիկացի Զաբա Զուդայի հետ: Վերջինս աշխարհի նախկին բացարձակ չեմպիոնն է:

16 հազարանոց մարզասրահը լեփ լեցուն էր հանդիսականներով: Մինչ մենամարտը պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի Կոստոյի հաղթելու հնարավորությունը շատ բարձր էր գնահատվում: Եվ պուերտորիկացին արդարացրեց սպասելիքները: 11-րդ ռաունդի վերջում Կոստոն Զուդային նոկդաունի ենթարկեց: Վերջինս կարողացավ ոտքի կանգնել, սակայն Կոստոն հարձակվեց նրա վրա՝ փորձելով ավարտել գործը: Մրցավարը տեսնելով, որ Զուդան ի վիճակի չէ այլեւս մենամարտելու, դադարեցրեց հանդիպումը: Բոլոր երեք մրցավարներն էլ միաձայն 97-91 հաշվով հաղթանակը շնորհեցին Կոստոյին:

Մենամարտից հետո Կոստոն հետեւյալն է նշել. «Սպասում էի, որ ծանր մենամարտ է լինելու: Այդպես էլ եղավ: Զուդան մի քանի հաջող գրոհներ ձեռնարկեց, սակայն պատրաստ էի դրանք դիմագրավել: Ընդհանուր առմամբ մենամարտն անցավ իմ թելադրանքով»: Իսկ ահա Զուդան պարտության մեջ մեղադրեց մրցավարներին եւ մրցակցին. «Նա երկու անգամ արգելված հնարքով հարվածեց ինձ, բայց մրցավարը չարձագանքեց: Կարծում եմ, որ մրցավարները Կոստոյի հետ համաձայնության էին եկել: Ես պահանջում եմ նոր մենամարտ անցկացնել ռեւանշի հասնելու համար»:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Անիտուր հատուկ մասնագիտացված պատմամշակութային զբոսաշրջության գործակալությունը սույն թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին կազմակերպում է 7 եւ 10 օրյա շրջագայություններ դեպի պատմական Հայաստան: Շրջագայության ընթացքում Դուք կլինեք Կարս-Անի-Իգդիր-Բայազետ-Վան (Աղթամար կղզի) - Բիթլիս-Մուշ-Խնուս-Էրզրում-Սարիղամիշ քաղաքներում:

Օգտվեք Ձեզ ընձեռված բացառիկ հնարավորությունից եւ մասնակիցը դարձեք մեր այս հիշարժան ուխտագնացությանը:

Մանրամասների համար զանգահարել

091 203-206 եւ *094 203-206* հեռախոսահամարներով:

USAID FROM THE AMERICAN PEOPLE

EURASIA FOUNDATION

Միգրացիայի վերաբերյալ ծրագիր

Ծրագրային առաջարկներ ներկայացնելու հրավեր

Եվրասիա հիմնադրամի Հայաստանի ներկայացուցչությունը հայտարարում է դրամաշնորհների բաց մրցույթ, որի նպատակն է տեղական կառույցների՝ ՀԿ-ների, քաղաքացիական միությունների, միջհամայնքային միավորումների եւ այլ կազմակերպությունների հիմքերի վրա ստեղծել Միգրացիայի եւ վերադարձի հարցերով քաղաքացիների ընդունելության կենտրոնների (ռեսուրս կենտրոնների) ցանց, հզորացնել պոտենցիալ աշխատանքային միգրանտներին եւ վերադարձողներին ծառայություններ մատուցելու այդ կենտրոնների կարողությունները, ինչպես նաեւ համագործակցություն առաջացնել Հայաստանում գործող կենտրոնների ցանցի եւ Ռուսաստանի հնարավոր գործընկերների միջեւ:

Ովքե՞ր կարող են դիմել.

Մրցույթին կարող է մասնակցել ցանկացած կազմակերպություն, որը գրանցված է ՀՀ օրենսդրության համաձայն որպես իրավաբանական անձ:

Դիմելու կարգը եւ ժամանակացույցը.

Ծրագրային առաջարկներ ներկայացնելու հրավերը հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով կարելի է ստանալ www.eurasia.am ինտերնետային կայքից կամ Եվրասիա հիմնադրամի երեւանյան գրասենյակից՝ Զարթոնքի 56 հասցեով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ծրագրի համակարգող Զարուհի Տոնոյանին zara@eurasia.am էլ. հասցեով կամ 58 60 95, 58 60 35 հեռախոսահամարներով:

Ս.թ. հունիսի 22-ին, ժ. 15:00-ին Եվրասիա հիմնադրամի նախաձեռնությամբ դիմորդների համար կկազմակերպվի նախամրցութային սեմինար: Ծրագրային առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. հուլիսի 4-ը, ժամը 18:00: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն մինչեւ ս.թ. հուլիսի 31-ը:

Մրցույթի ֆինանսական աջակցությունը առաջացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID):

Ձեւ N1

ՀԱՇՎԱՊԱՀՈՒՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01.01.2007 թ.

Կազմակերպության անվանումը		ծածկագիրը ԵՐ-ի Գեղ. ժամ-ի գործառնական ԲԲԸ	
Փաստացի գործունեություն	ժամ-ի արտադրություն	36911	
Պետբեգիստրում գրանցման հածարը		27812000979	
Հարկ վճարողի հաշվառման հածարը		00401886	
Ցանքի միավորը		հազ. դրամ	
Գտնվելու վայրը	Ք. Երեւան, Լ. Լիսինյան-33	հեռախոսը	559065
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Լ. Լիսինյան-33	հեռախոսը	559065

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	010	408572	405416
Հիմնական միջոցներ	060	253	347
Չեռնարկված հարկային ակտիվներ	070		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ այդ թվում	074	408825	405763
II. Ընթացիկ ակտիվներ	090	269893	269813
Նյութեր	110	3320	3319
Առագաստ առարկաներ	130	90494	90494
Արտադրանք	150	12	12
Տրված ընթացիկ կանխավճարներ	160	40218	39992
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	170	558	735
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	180	1988	1267
Այլ դեբիտորական պարտքեր	200	1131	833
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	220	407614	406465
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	230	816439	812228
ՀԱՇՎԵԿՇԻՌ			

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ	240	303030	303030
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի գուտ գումար	260	62421	15441
Վերագնահատումից եւ վերարժեւորումից տարբերություններ	270	(228854)	(186127)
Կուտակված շահույթ	290	241945	241945
Սեփական թողարկման այլ տարբեր, այդ թվում՝	300	378542	374289
Ընդամենը սեփական կապիտալ			
V. Ընթացիկ պարտավորություններ	390	211021	211275
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	400	225788	225743
Ստացված ընթացիկ կանխավճարներ	410	253	94
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	420	107	68
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	430	353	384
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	450	375	375
Այլ կրեդիտորական պարտքեր	490	437897	437939
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	500	816439	812228
ՀԱՇՎԵԿՇԻՌ			

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2006 թ., տարի

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Վաղուցվան ծախսեր	050	(9242)	(9524)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	(9242)	(9524)
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	15532	10370
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	(7228)	(5099)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(938)	(4253)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	75	
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	(863)	(4253)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նկազեցումը	160	(863)	(4253)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նկազեցումից հետո	180	(863)	(4253)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190	(28)	

Հայտարարություն

«Երեւանի Գեղարվեստական ժամացույցների գործարան» ԲԲԸ խորհուրդը տեղեկացնում է, որ ս/թ հունիսի 30-ին ժամը 11-ին Լ. Լիսինյան 33 հասցեում տեղի կունենա ընկերության տարեկան ժողովը:

Օրակարգ՝

1. Հաշվետու հաշնաժողովի ձեւավորումը
2. 2006 թ. տարեկան հաշվետվությունը եւ 2006 թ. ֆինանսական հաշվետվություն
3. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հաստատում
4. 2007 թ. ընկերության տնտեսական գործունեության հաստատում
5. Ընկերության խորհրդի կազմի ընտրություն
6. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի ընտրություն
7. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատում

Ժողովի ժամանակ ճշտարկվող հարցերի մասին տեղեկություններ կարող եք ստանալ ընկերության հաշվապահությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14-16-ը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 25.05.2007 թ. դրությամբ:

Ժողովի մասնակիցների գրանցումը անցկացվելու է ս/թ հունիսի 30-ին, ժամը 10-11-ը:

Անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը պարտադիր է:

Ընկերության 2006 թ.-ի աուդիտն իրականացրել է «Սարու-Աուդիտ» ՍՊԸ-ն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.Թ. Ցախարյան

Ծանուցում

ԿԱՐԳ

«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» թեմայով լավագույն գրական ստեղծագործության ամենամյա միջազգային մրցույթի

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 Ներկա դրույթները որոշում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» թեմայով անցկացվող ամենամյա միջազգային գրական մրցույթի կարգավիճակը, նպատակները, խնդիրները ու անցկացման կարգը:

1.2 Մրցույթի հիմնական նպատակն է Հայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներին ու աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի դպրական անցյալին, հավաստերկնել նրա արդյունքի հանդեմ: Մրցույթը կնպաստի Հայաստանի-Սփյուռք հարաբերությունների զարգացմանը, ազգային միասնության արդիականացմանը, խթան կհանդիսանա հայապահպանման գործին, կօժանդակի հայ մշակույթի, հայոց լեզվի եւ հայ գրականության ճանաչմանն ու տարածմանը:

1.3 Մրցույթն անցկացվում է Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից՝ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ:

1.4 Մրցույթն անցկացվում է 2007 թվականի ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 15-ը:

2. Մրցույթի դրամանները.

2.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներն ու բարձր դասարանների աշակերտները:

2.2 Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ՝ շարադրությամբ, բանաստեղծությամբ, դպրամվեպով, ակնարկով, հրապարակախոսությամբ եւ այլն:

2.3 Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում միայն նշված ժամկետում ուղարկված, թեմային ներկայացվող դրահանջներին համապատասխանող, համակարգչով հավաքված աշխատանքները:

2.4. «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» մրցույթին ուղարկված աշխատանքներում դրեսի է ներկայացվի, թե ինչու է այս կարգախոսը հայերիս համար սրտամոտ, հոգեհարազատ գաղափար, որի շուրջ էլ դրեսի է միավորվեն աշխարհով մեկ սփռված հայերը:

Միաժամանակ ցանկալի է, որ մրցույթի յուրաքանչյուր մասնակից իր ներկայացրած աշխատանքում փորձի տեսնել իր տեղն ու դերը հայ դրեսականության վերելքին, բարգավաճմանը ծառայելու, ազգային վերազարթոնքին իր անվերապահ մասնակցությունը բերելու գործում:

3. Մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը.

3.1 Մրցույթն անցկացնելու նպատակով ձեւավորվում է կազմկոմիտե:

3.2 Կազմկոմիտեն ձեւավորում է աշխատանքային հանձնախումբ, հաստատում կազմը, ամփոփում մրցույթի արդյունքները:

3.3 Աշխատանքային հանձնախումբը.

- մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները,
- սահմանում է մրցանակային տեղերը եւ անվանակարգերը,
- ստուգում եւ գնահատում է աշխատանքները,
- որոշում է հաղթողներին եւ ներկայացնում կազմկոմիտեի քննարկմանը:

3.4 Ուղարկված աշխատանքները հետ չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում:

3.5 Մրցույթի կազմակերպիչներն իրենց իրավունք են վերապահում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում:

3.6 Մրցույթի արդյունքները ուսանողների եւ աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին:

4. Հաղթողների պարգեւատրումը.

4.1 Մրցույթում առաջին երեք տեղերը բահած ուսանողները, ինչպես նաեւ աշակերտները կպարգեւատրվեն համակարգիչներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ արժեքավոր նվերներով, պատվոգրերով:

4.2 Մրցույթի արդյունքների ամփոփման եւ հաղթողների պարգեւատրման արարողությունը տեղի կունենա Երեւանում, 2007 թվականի հոկտեմբերին, «Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում» ծրագրի շրջանակներում:

5. Մրցութային աշխատանքին ներկայացվող դահանջները.

5.1 Ներկայացվող աշխատանքները պետք է լինեն գրագետ, հստակ, տրված թեմային համապատասխան:

5.2 Մրցութային աշխատանքները կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն եւ անգլերեն, մինչեւ 2007 թվականի հունիսի 15-ը (Հայաստանից, Արցախից եւ ԱՊՀ երկրներից ներկայացված աշխատանքներն ընդունվում են միայն հայերեն եւ ռուսերեն, անգլերեն աշխատանքներ ընդունվում են միայն հեռավոր արտերկրից):

5.3 Ներկայացված աշխատանքների ծավալը չպետք է գերազանցի 3 համակարգչային էջը:

5.4 Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային տարբերակով (Word ֆորմատով (*.doc, *.rtf) Windows-ի համար), վերին եւ ստորին լուսանցքները՝ 2սմ, աջ եւ ձախ լուսանցքները՝ 2.5սմ, կարմիր տողը՝ 1.25սմ, տպատառի չափը՝ 14 pt, ինտերվալը՝ 1: Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ անձամբ կամ ուղարկվել փոստով:

5.5 Պարտադիր է ունենալ տիտղոսաթերթ, որտեղ պետք է նշված լինի.

- ազգանուն
- անուն
- հայրանուն
- ծննդյան թիվ
- հասցե
- հեռախոս
- էլեկտրոնային փոստի հասցեն

Ուսումնական հաստատության անվանումը եւ վայրը:

6. Աշխատանքները կարող են ուղարկվել հետեւյալ հասցեներով.

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Տերյանի 69, 4 հարկ
Հեռ./ֆաքս (37410) 522792, (37410) 410442
E-mail: mrcuyt2007@yahoo.com

կամ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Գլխավոր պողոտա, Կառավարության III շենք, 611 սենյակ

Մրցույթի կազմկոմիտե

2007 թ. հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրությունը

2007 թ. հունիսի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի արտագնա նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահի Տիգրան Սարգսյանը, նախագահի տեղակալ Արթուր Ջավադյանը, խորհրդի անդամներ Ամալյա Սարիբեկյանը, Վարդան Մովսիսյանը, Անդրանիկ Նորենկյանը, Կարինե Մինասյանը, Վալե Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչեւ մայիսն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների եւ երկրորդ եռամսյակի համար կանխատեսված ուղղությունների հետ դրանց համեմատականի քննարկումը:

Գնաճ

2007թ. մայիսին արձանագրվել է 2.1% գնաճ, ընդ որում պարենային ապրանքների գներն աճել են 3.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.8%-ով, իսկ ծառայությունների սակագները չեն փոփոխվել: Այս պայմաններում 12-ամսյա գնաճը մայիսին կազմել է 3.8%՝ ցածր լինելով երկրորդ եռամսյակի համար կանխատեսվող գնաճի միջակայքի կենտրոնական 4% մակարդակից:

Արտաքին միջավայր

2007թ. ապրիլ-մայիսին արտաքին հատվածի զարգացումները որոշակիորեն տարբերվեցին կանխատեսվածից: Մասնավորապես, նավթի միջազգային գինը մայիս ամսվա վերջին հասնելով 1 բարելի դիմաց 70 ԱՄՆ դոլարի շուրջ, որը որոշակիորեն ավելի է սպասվածից: Հիմնական պատճառը շուկայի առաջարկի անբավարարությունն է ինչպես հում նավթի, այնպես էլ վերամշակված նավթամթերքների առումով: Բացի դրանցից իրենց դերն ունեն նաեւ Իրանի շուրջ եւ Նիգերիայում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները: Ակնկալվում է, որ առաջիկայում նավթի միջազգային գինը տատանողական վարագիծ դրսեւորելով հանդերձ, կգտնվի ներկայիս մակարդակի շրջանակներում:

Բազային մետաղների շուկայում շարունակվել է գների աճի միտումը, որի նման տեմպերով շարունակման պարագայում կարող է առեւտրի պայմանների բարելավման միջոցով արժեւորել ՀՀ դրամի փոխարժեքը եւ նվազեցնել ներմուծվող ապրանքների դրամային գները: Արդյունքում գնաճի նվազեցման առումով դրական ազդեցություն կունենա նաեւ զարգացած երկրներում դեռեւս բարձր գնաճի պահպանման պարագայում համաշխարհային տոկոսադրույքների բարձրացման միտումը:

Ամփոփելով նշենք, ներմուծված ապրանքների գնով տարվա սկզբից նկատվում է դեֆլյացիոն միտումներ (ամսական 0.1-0.2%)՝ բացառությամբ բենզինի, եւ ակնկալվում է, որ այս զարգացումները կշարունակվեն նաեւ հաջորդ եռամսյակներում: Ինչ վերաբերում է բենզինի դրամային գներին, ապա առաջիկայում դրանց բարձրացման նախադրյալներ չեն ակնկալվում:

Իրական հատված

2007թ. առաջին չորս ամիսներին տնտեսական աճը կազմել է 11.1%, որին առավել մեծ՝ շուրջ 5 տոկոսային կետով նպաստել է ծառայությունների ոլորտը:

Արդյունաբերությունում ավելացված արժեքի աճը, առաջին եռամսյակի ցուցանիշի համեմատ նվազել է մոտ 2.5 տոկոսային կետով եւ կազմել 3%: Ընդ որում, աճի տեմպի նվազումը ամբողջովին պայմանավորվել է առամանդագործության ենթաճյուղում դեռ նախորդ տարվանից արձանագրվող անկմամբ: Ինչպես եւ առաջին եռամսյակում, արդյունաբերության մնացած ենթաճյուղերից առավել բարձր աճ է արձանագրվել էներգետիկայի, ինչպես նաեւ սննդի, քիմիական եւ հանքագործական արդյունաբերության ենթաճյուղերի գնով:

Շինարարության ճյուղում՝ պայմանավորված տրանսպորտի եւ կապի ոլորտում ընթացող զարգացումներով, շինարարության ծավալների աճը կազմել է 6.4%, իսկ ավելացված արժեքի աճը՝ 18.5%: Նշված երկու ցուցանիշների նման մեծ տարբերությունը պայմանավորված է կապի ոլորտում գործող ընկերությունների կողմից մարտին զգալի ծավալի շինարարության փուլից հետո (որի արդյունքում տրանսպորտի եւ կապի ոլորտում իրականացված շինարարությունը կազմել է ողջ շինարարության կեսը), ապրիլին շինմոնտաժային աշխատանքների փուլի իրականացմամբ: Ակնկալվում է, որ տարվա երկրորդ կիսամյակից նշված ընկերությունները վերսկսելու են իրենց ներդրումները կապիտալ շինարարության գնով:

Միեւնույն ժամանակ, մնացած ճյուղերում արձանագրվել է շինարարության ծավալների նվազում: Մասնավորապես, էներգետիկայի ոլորտում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ծրագրերը նախագծման փուլում են եւ հիմնական շինարարությունն իրականացվելու է մի քանի ամիս հետո, իսկ մշակող արդյունաբերությունում՝ ներդրումները հիմնականում իրականացվում են ոչ թե շինարարության, այլ շինմոնտաժային աշխատանքների (այն է՝ նոր սարքավորումների տեղակայման) գնով: Բնակարանային շինարարության ծավալների նվազումը արձանագրվել է ի հաշիվ շահագործման հանձնված բնակելի շենքերի քանակի նվազման:

Ծառայությունների ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 11.4% իրական աճ՝ գերազանցելով հունվար-մարտի ցուցանիշը շուրջ 3 տոկոսային կետով: Ընդ որում, աճի տեմպի արագացում է արձանագրվել ինչպես կապի եւ տրանսպորտի (համապատասխանաբար 30.4% եւ 28.5% իրական աճ), այնպես էլ առեւտրի (18.3% իրական աճ) ծառայությունների գնով: Ընդ որում, առեւտրի ոլորտում առավել բարձր՝ շուրջ 30.6% իրական աճ է արձանագրվել մեծածախ առեւտրի գնով: Նշենք, որ ծառայությունների ճյուղում արձանագրված բարձր աճը էապես պայմանավորվել է կատարված մեծածավալ ներդրումներով, որը, ճյուղի արտադրական ներուժի մեծացման միջոցով կարող է բարենպաստ միջավայր ստեղծել սակագների ցածր մակարդակի ձեւավորման համար:

Գյուղատնտեսության ավելացված արժեքի իրական աճը կազմել է 1.2%: Նշենք նաեւ, որ այս ճյուղի հնարավոր նպաստումը ինչպես ՀՆԱ աճի, այնպես էլ գների մակարդակի ձեւավորման տեսանկյուններից ավելի ակնառու կդառնա միայն առաջիկա ամիսների զարգացումների արդյունքում:

2007թ. հունվար-ապրիլին ապրանքների արտահանման (արտահանման աճին նպաստել են բազային մետաղների գների աճը, ինչպես նաեւ ACP ընկերության փետրվարի վերջին ադեն դոմնային վառարանի տեղադրման աշխատանքների ավարտը: Արտաքին հատվածի օդերեւութային ցուցանիշների համաձայն, ադամանդի եւ էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների նվազումը, փոխհատուցվել է մեծ կշիռ կազմող կոնյակի, երկաթամիահալվածքի, պղնձի հանքարի արտահանման ծավալների աճերով) աճը կազմել է 27.1%, իսկ առանց ադամանդի վերջինիս աճը կազմել է 44.4% (2007թ. ապրիլին տ/տ աճը կազմել է 32.4%): Արտահանման աճի նշանակալի մասը պայմանավորվել է կոնյակի, երկաթամիահալվածքի (ֆերոմոլիբդեն), ալյումինե փայլաթիթեղի եւ պղնձի հանքարի համախառն արտահանման աճով: Բազային մետաղների արտահանման աճում դերակատարում ունեն ինչպես գնային գործոնները, այնպես էլ իրական ծավալների աճերը: Կոնյակի եւ բազային մետաղների իրական ծավալների աճը պայմանավորվել է արտադրական կարողությունների օգտագործման ասիճանական աճով, ինչպես նաեւ կոնյակի դեպքում դեռ նախորդ տարվա սկզբներին արտահանման հետ կապված տեխնիկական որոշակի խնդիրների լուծմամբ: Արտահանման նման աճի, ինչպես նաեւ բազային մետաղների գների աճի միտման պահպանման պարագայում երկրորդ եռամսյակում արտահանման աճի ցուցանիշը կարող է բարձր լինել կանխատեսվածից:

Նույն եզրակացությունը կարելի է անել նաեւ ներմուծման վերաբերյալ, քանի որ ներմուծման բարձր աճի տեմպերը պահպանվել են նաեւ ապրիլին, երբ գրանցվել է 38.3% աճ: 2007թ. հունվար-ապրիլին ապրանքների ներմուծման ծավալներն (օդերեւութային ցուցանիշների համաձայն հունվար-ապրիլին ներմուծման աճին հիմնականում շարունակում են նպաստել գազի ներմուծման ծավալների, մարդատար ավտոմեքենաների, անմշակ ոսկու ներմուծման ծավալների աճերը) աճել են 48.8%-ով, իսկ առանց ադամանդի՝ 58.9%-ով, ընդ որում արձանագրված աճի զգալի մասը պայմանավորվել է հումքային ապրանքների եւ սպառողական ապրանքների ներմուծման աճերով: Հումքային ապրանքների ներմուծման աճի մեջ գերակշռել է գազի, նավթամթերքի եւ ցորենի ներմուծումը, որոնց ներմուծման ծավալների ընդհանուր աճը կազմել է 82.6 մլն ԱՄՆ դոլար: Սպառողական ապրանքների ներմուծման աճը պայմանավորվել է մարդատար ավտոմեքենաների, դեղամիջոցների եւ թռչնի մսի ներմուծման աճերով, որոնց ներմուծման ծավալների ընդհանուր աճը կազմել է 78.4 մլն ԱՄՆ դոլար: Հումքային ապրանքների ներմուծումը որպես միջանկյալ սպառման ապրանքներ կրում է տնտեսությունում վերջիններիս նկատմամբ պահանջարկի աճի ազդեցությունը, ինչն արտացոլվել է արդյունաբերության առանց ադամանդի արտադրության համախառն թողարկման իրական 7.8% աճով: Իսկ սպառողական ապրանքների ներմուծման աճին նպաստած ապրանքատեսակների կազմից կարելի է ենթադրել, որ վերջիններս սպառման էական աճի հետեւանք չեն կարող լինել:

Միաժամանակ, ապրիլին գրանցվել է ոչ առեւտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի տ/տ բարձր՝ 43.7% աճ, իսկ հունվար-ապրիլ ամիսներով վերջինիս աճը կազմել է 34.9%: Մայիս-հունիս ամիսներին նման բարձր աճի տեմպերի պահպանման պարագայում, ոչ առեւտրային բնույթի փոխանցումների գնով եւս կարող է արձանագրվել կանխատեսվածից բարձր ցուցանիշ:

Հարկաբյուջետային հատված

2007թ. երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը գնահատող հարկաբյուջետային ազդակի նախնական փաստացի ցուցանիշը (հաշվարկված պետական հատվածի ապրիլ, մայիս ամիսների փաստացի ցուցանիշերի եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված հունիս ամսվա նախնական ծրագրի հիման վրա) կկազմի 0.3 զտպող, որը կանխատեսվածի շրջանակներում է: Սակայն կանխատեսվածի նկատմամբ փոքր-ինչ շեղվել են եկամուտների եւ ծախսերի ազդեցության չափերը: Այսպես, եկամուտների մասով կանխատեսվածի նկատմամբ եռամսյակի արդյունքում կարձանագրվի ավելի մեծ զտպող ազդեցություն՝ պայմանավորված հիմնականում հարկային եկամուտների (նշենք, որ ոչ հարկային եկամուտները եւս գերակատարվել են՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից վճարված 7.0 մլրդ դրամ ոչ հարկային մուտքերով, սակայն ազդակների հաշվարկում դա չի ներառվում, քանի որ այն տնտեսությունից հավաքագրված գումար չի հանդիսանում) գերակատարմամբ: Իսկ ծախսերի մասով տպավորություն է ավելի մեծ ընդլայնող ազդեցություն, քան կանխատեսված էր՝ պայմանավորված եկամուտների նշված գերակատարման պայմաններում ավել ծախսերի կատարմամբ: Համախառն պահանջարկի եւ հետեւաբար գնաճի վրա ազդեցության տեսանկյունից ակնկալվում է հարկաբյուջետային հատվածի չեզոք ազդեցություն:

Հաշվի առնելով իրական եւ հարկաբյուջետային հատվածների վերոնշյալ զարգացումները, ինչպես նաեւ տարեսկզբից արձանագրված ներին արտադրության պարենային ապրանքների գների եւ ծառայությունների սակագների ցածր աճի տեմպերը, կարելի է եզրակացնել, որ ամբողջական առաջարկի զարգացումները համահունչ են ամբողջական պահանջարկի զարգացումներին, որի պարագայում լրացուցիչ գնաճային ճնշումների վտանգ չի ակնկալվում:

Փող եւ վարկ

Ֆինանսական շուկայում տեղի են ունեցել հետեւյալ զարգացումները: Շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը կազմել է 4.71%՝ (նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.43 տոկոսային կետով), իսկ միջբանկային ռեպո գործառնությունների տոկոսադրույքը կազմել է 3.93%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.62 տոկոսային կետով: Ընդհանուր առմամբ, ապրիլի սկզբից ԿԲ-ի ռեպո տոկոսադրույքի 0.25 բազիսային կետով նվազումից հետո, միջբանկային ռեպո տոկոսադրույքը մարտի վերջի համեմատ մայիսի վերջին նվազել է շուրջ 1.13 բազիսային կետով:

Մայիս ամսվա ընթացքում ԿԲ դրամաշնորհների տոկոսադրույքները ցուցաբերել են նվազման միտում, ինչը դրամանավորված էր դեռեւս ապրիլ ամսից թողարկման ծավալների կրճատմամբ: Արդյունքում մայիսին 16.4 մլրդ դրամ դրամաշնորհների մարման դարագայում թողարկված 7.5 մլրդ դրամ ծավալով դրամաշնորհները տեղաբաշխվել են ամբողջությամբ 6.2% միջին եկամտաբերությամբ՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.14 տոկոսային կետով:

Ինչ վերաբերում է վարկերի տոկոսադրույքներին, ապա առկա տվյալների համաձայն դրանք էական փոփոխությունների չեն ենթարկվել:

Մինչեւ մայիս ընկած ժամանակահատվածում դրամավարկային քաղաքականությանը բնորոշ է եղել դրամայնացման ակտիվ գործընթացի շարունակությունը, որն արտահայտվել է դրամավարկային փաստացի ցուցանիշների երկրորդ եռամսյակի կանխատեսված մակարդակների որոշակի գերազանցմամբ: Հատկապես բարձր աճի տեմպեր են արձանագրվել դրամային զանգվածի եւ փողի բազայի գնով՝ համապատասխանաբար տ/տ 67.8% եւ 52.6%: Դրամային զանգվածի կառուցվածքում պահպանվել են եր շրջանառությունում եղած կանխիկի (64%), եր դրամային ավանդների (73.7%) աճի բարձր տեմպերը: Ի տարբերություն դրան, արտարժութային ավանդները դրամային արտահայտությամբ նվազել են 4.2%-ով: Տարվա անցած ժամանակահատվածում շարունակվել է նաեւ ֆինանսական միջնորդության աճը, որն արտահայտվել է ինչպես դրամային բազմակի տ/տ 9.9%, այնպես էլ տնտեսության վարկավորման 38.2% աճերով: Ընդ որում, ինչպես եւ նախորդ ամիսներին, ապրիլին պահպանվել են դրամով վարկավորման աճի բարձր տեմպերը՝ տ/տ 91.5%:

Արձանագրեցին՝

2007թ. ապրիլ-մայիս ամիսների մակրոտնտեսական միջավայրի, ինչպես նաեւ ֆինանսական շուկայի զարգացումները հիմնականում համահունչ են եղել երկրորդ եռամսյակի կանխատեսումներին: Արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները նախորդ տարվա համեմատ մնում են չափավոր՝ չնայած նավթամթերքների միջազգային գների ակնկալվածից բարձր մակարդակի պահպանմանը, իսկ ամբողջական պահանջարկի զարգացումները փաստում են լրացուցիչ գնաճային ճնշումների ներին աղբյուրների բացակայության մասին:

Որոշեցին՝

2007թ. հունիսի 4-ի նիստում ԿԲ խորհուրդն անփոփոխ թողեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 4.5 տոկոս: Ներգրավված դրամային միջոցների եւ լոմբարդային վարկերի տոկոսադրույքները պահպանվեցին համապատասխանաբար՝ 1.5% եւ 7.5% մակարդակներում:

Առաջիկա ամիսների ընթացքում տնտեսության զարգացման հեռանկարների փոփոխության դեպքում ԿԲ խորհուրդը չի բացառում տոկոսադրույքների ճշգրտման հնարավորությունը:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ մամուլի ծառայություն

ՕՐԱԹԵՐԹ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԵԼ՝ 58-23-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 11.06.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: